

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԲԱԼԱՅԱՆ ՎԱՅՐԱՄ ՌԱԶՄԻԿԻ**

**ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ  
(17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ-2007 ԹՎԱԿԱՆ)**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության սեղմագիր**

Ատենախոսության թեման հաստատվել է Արցախի պետական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Սինասյան Է.Գ.**  
պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Ղահրամանյան Կ.Յ.**  
պատմական գիտությունների դոկտոր  
**Ստեփանյան Գ.Ս.**

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. ապրիլի 12-ին, ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈՂ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մարտի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական  
քարտուղար, պ.գ.թ., դոցենտ

Հ.Ղ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը և հրատապությունը:** 20-րդ դարի վերջերից սկսած՝ աշխարհում ազգամիպջյան հարաբերություններում տեղի ունեցած որակական փոփոխությունները և այդ խորապատկերի վրա ԽՍՀՄ փլուզումն ու ՀՀ և ԼՂՀ ստեղծումը հնարավորություն ընձեռեցին պատմական շատ իրադարձություններ վերահիմաստավորել ու վերագնահատել՝ դրանք համաատասխանեցնելով հասարակագիտական օրինաչափությունների տրամաբանությանը: Այդ ամենը մեր օրերում անիրաժեշտ է ծառայեցնել մարդկության առաջընթացին: ԼՂՀ կարգավիճակի շուրջ ծավալված միջազգային քննարկումները, պատմական հայրենիքի գերյալ տարածքների մի մասի ազատագրումը հրատապ պահանջ է առաջադրել՝ խորապես ուսումնասիրել և հստակ պատկերացում կազմել Հայոց արևելից նահանգների վաղանցյալ իրողությունների մասին: Աղբյուրների և Թուրքիայի հակահայ քարոզչության և իրական պատմության խեղաթյուրման պայմաններում թեմայի ուսումնասիրությունն առավել հրատապ է դառնում:

17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականը՝ արցախահայության ազգային ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության մութ կողմերի քողազերծման պայմաններում մենք հասու ենք դառնում բազում դարերի ընթացքում փոքրաքանակ գինական կարողություններով, թշնամական ուժերով շրջափակման և մշտական սադրանքների ու ճնշումների պայմաններում արցախահայության՝ մայր հայրենիքում գոյատևելու գաղտնիքին: Այդ ամենի ճիշտ ընկալումը հայկական երկու պետություններին՝ ՀՀ-ին և ԼՂՀ-ին հնարավորություն է ընձեռում դիմակայելու 21-րդ դարի մարտահրավերներին:

Նոր և նորագույն շրջաններում Արցախի շուրջ ծավալված պատմական իրադարձությունների, դաշնակից և հակառակորդ երկրների շահագրգիռ մոտեցումների և նպատակների լուսաբանումը կարող է ուղենիշ հանդիսանալ ԼՂՀ արտաքին քաղաքականության հիմնադրույթների ձևավորման գործում:

17-րդ դարի երկրորդ կեսից մեկնարկած և առայսօր վայրէջքներով ու վերելքներով ընթացող արցախահայության ազատագրական պայքարը և պետականակերտման մանրամասներն առաջին անգամ որպես մեկ ամփոփ ամբողջություն ներկայացնելն ունի գիտական նշանակություն: Այն ևս մի համեստ քայլ է հայոց պատմության տվյալ ժամանակաշրջանի ստվերոտ կողմերի բացահայտման ասպարեզում:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է ձեռագրերի, նորահայտ արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և հրապարակի վրա եղած պատմագիտական գրականության հիմքերի վրա համակողմանի ուսումնասիրել 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականն ընկած ժամանակահատվածի՝ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմությունը՝ առավել շատ ծանրանալով հիմնահարցը բնութագրող և առանցքային կողմերի վրա:

Ատենախոսության մեջ լուսաբանվել են հետևյալ խնդիրները.

ա/ վերոբերյալ ժամանակահատվածում պարբերացնել արցախահայ ազատագրական պայքարի և պետականակերտման գործընթացի պատմությունը  
բ/ լուսաբանել 17-րդ դարի վերջերին Արցախում մեկնարկած ազատագրական պայքարի գաղափարաբանության ձևավորման և այն համահայկական հարթություն տեղափոխելու ընթացքը

զ/ բացահայտել 1720-ական թվականներին Արցախում պետականության վերականգնման հանգամանքները և դրանցից բխող առանձնահատկությունները  
դ/ վեր հանել 1736-1813 թվականներին Արցախի մելիքությունների քաղաքական կարգավիճակի փոփոխման պատճառները

ե/ քննարկման նյութ դարձնել 18-րդ դարի կեսերից Գանձասարի կաթողիկոսների և Արցախի մելիքական տների գլխավորած ազատագրական պայքարի ու դրան զուգընթաց՝ Հայաստան-Ռուսաստան, մասնավորապես՝ Արցախ-Ռուսաստան քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների արմատավորման մանրամասները

զ/ ցույց տալ շուրջ մեկ դար՝ 18-րդ դարի սկզբներից մինչև 1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, ցարական Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության կողմնորոշիչները և այդ խորապատկերի վրա՝ Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերի ձեռքբերումներն ու կորուստները

ե/ բացահայտել ռուսական տիրապետության շրջանում արցախահայության, մասնավորապես՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռի և մելիքական տների նկատմամբ ցարական արքունիքի, իսկ հետագայում նաև՝ բոլշևիկյան իշխանությունների վարած քաղաքականության դրդապատճառները և իրական նպատակները

ը/ ընդգծել 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբներին արցախահայության շրջանում հայկական պետականության գաղափարները կենսունակ պահելու գործում Հայ առաքելական եկեղեցու, մտավորականության, հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների դերակատարությունը

թ/ նորովի լուսաբանել 1917-20 թվականների ժամանակի հոլովույթում արցախահայության պետական կյանքի բնորոշ կողմերը

ժ/ բացահայտել քեմալա-բոլշևիկյան այլամի կործանարար հետևանքները Արցախի տարածքային պատկանելության հարցում

ժա/ վերաարժևորել ԼՂԻՄ-ի տեղն ու դերը ԽՍՀՄ վարչաքաղաքական համակարգում

ժբ/ վեր հանել ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի գաղութային քաղաքականության նպատակները և խորհրդային բիրտ վարչակարգի պայմաններում արցախահայության գաղտնի ու բացահայտ պայքարի մանրամասները

ժգ/ ցույց տալ ԼՂԻ կազմավորման անխուսափելիությունը և պետական շինարարության առանձնահատուկ կողմերը:

***Ռուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները:***

Ատենախոսությունն ընդգրկում է 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականն ընկած ժամանակահատվածում Արցախի ռազմաքաղաքական իրադարձությունները, որոնք առանցքային նշանակություն ունեցան երկրամասում հայոց պետականության բեկորների պահպանմանը և այն համահայկական հարթություն տեղափոխմանը: Ատենախոսությունն ամբողջական տեսքի բերելու նպատակով քննության նյութ են դարձել նաև նշված ժամանակահատվածում Արցախին առնչվող տարածաշրջանային գործընթացները:

17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականն Արցախում պետականակերտման գործը մի ամբողջություն համարելով, այդուհանդերձ, նկատելի է, որ այն միապաղաղ և նույնօրինակ ընթացք չի ունեցել: Ռուստի այս հանգամանքը, ինչպես նաև իրապարակի վրա եղած նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը խնդրո առարկա ժամանակահատվածը պատմաշրջանների բաժանելու՝ ասել կուզի պարբերացման անհրաժեշտություն է առաջադրել:

ա/ 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1722 թվականը, Գանձասարի կրոնապետության գոյության պայմաններում, Արցախում մշակվեց հայ ժողովրդի ազատագրման գաղափարաբանությունը և ռազմավարությունը:

բ/ 1722-36 թվականներն ընդգրկող պատմաշրջանը բնութագրվում է նոր վարչաքաղաքական փոփոխություններով, ազատագրական պայքարի արդյունքում Արցախում վերակերտվում է հայոց անկախ պետականությունը:

գ/ 1736-1813 թվականների շրջափուլում՝ տարածաշրջանային զարգացումների թելադրանքով, նոր իրավիճակ ստեղծվեց Արցախում: Պարսկական տերության կազմում մեկըություններն ունեին ներքին ինքնավար կարգավիճակ: Ի պատասխան Պարսկաստանի և նրա գերակայության տակ գտնվող Լեռնային Ղարաբաղի հարևան խանությունների բռնաճնշումներին՝ 18-րդ դարի վերջերին համաժողովրդական պայքարի բովում Արցախի լեռներում հղացավ միասնական հայրենիքի՝ Հայաստանի ազատագրման գաղափարը:

դ/ Ցարական տիրապետության շրջանում՝ 1813-1917 թվականներին, չնայած մեկըական տները վերացվեցին, իսկ Գանձասարի կաթողիկոսական աթոռն էլ վերածվեց սովորական թեմի, այնուամենայնիվ, Արցախում պետականության գաղափարները կենսունակ մնացին, և դրա հիմնական կրողները դարձան նախկին մեկըական տների, հոգևորականների, մտավորականների ներկայացուցիչները, իսկ 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ ազատագրական խմբակները, հասարակական կազմակերպությունները և կուսակցությունները:

ե/ 1917-1923 թվականներին, երկրամասի պատմության այդ փուլում, ցարական կայսրության փլուզման պայմաններում, արցախահայությանը հաջողվեց վերակերտել ազգային պետականությունը: Արցախում ժողովրդի և իշխանության միասնության հիմքերի վրա ստեղծված պետականությունն էլ դարձավ երկրամասում ազգային ինքնության պահպանման հիմնական գրասկանը: Այդ միասնությունը ճեղք տվեց 1920թ. մայիսին:

Չնայած արցախահայության դիմադրական պայքարին՝ բոլշևիկյան գաղափարախոսության և պանթուրքիստական ծրագրերի իրագործման շրջանակում Արցախը և Նախիջևանը նվիրաբերվեցին խորհրդային Ադրբեջանին:

զ/ Խորհրդային տարիներին՝ 1923-1988 թվականներին, արցախահայությունը, չնայած մասնատված ու ջլատված և մայր Հայաստանից կտրված, իր մեջ ունենալով զավթիչների դեմ պայքարելու հնարամտություն ու կամք, կարողացավ դիմակայել Ադրբեջանի գաղութատիրական հավակնություններին՝ պահպանելով կիսանկախ վիճակն ու ազգային ինքնությունը:

է/ Նորոյա ժամանակներում՝ 1988-2007 թվականներին, վերելքներով ու վայրէջքներով առլեցուն, արցախահայության բազում դարերի ընթացքում ազատագրական հարատև պայքարը հասավ իր տրամաբանական հանգրվանին: Երկրամասի հայությունը ոչ միայն ձեռք բերեց անկախություն, այլ նաև վերակերտեց իր ազգային պետականությունը:

**Ուսումնասիրության մեթոդաբանությունը:** Առենախոսությունը գրված է պատմականության ու պատմահամեմատական վերլուծական մեթոդով:

Հարազատ մնալով պատմական ճշմարտությունը վեր հանելու սկզբունքներին՝ ուսումնասիրությունը կատարվել է ամաչառ ու անկողմնակալ ձևով, այս կամ այն իրողության պատճառների վերլուծությամբ, օրինաչափությունների հաշվառմամբ:

Օգտագործած ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի նյութերի, պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, համեմատվել, պարզաբանվել և վերլուծության են ենթարկվել բազմաբնույթ, երբեմն իրարամերժ փաստեր:

Փորձ է կատարվել ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող շուրջ երեքդարյա իրադարձությունները, որպես մի ամբողջական գործընթացի առանձին հատվածներ, քննության ենթարկել պատմական զուգահեռներում՝ վեր հանելու ճշմարտությունը, երբեմն էլ, ելնելով որոշ անհրաժեշտություններից, առաջադրել հիմնահարցերի լուծման սեփական մոտեցումներ ու հայեցակետեր:

***Ուսումնասիրության գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:***

Սույն ուսումնասիրությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 2007 թվականն արցախահայության ազատագրական պայքարի օրինաչափ ընթացքը, դրա զարգացման միտումները և այդ խորապատկերի վրա ազգային պետականության վերակերտման գործընթացը՝ բազմապիսի սկզբնաղբյուրների հիման վրա ամփոփ և ամբողջական տեսքով ներկայացնելու առաջին փորձն է:

Ատենախոսության մեջ առաջին անգամ ցույց է տրված.

ա/ Արցախում 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 18-րդ դարի 30-ական թվականների կեսերն ընկած ժամանակահատվածում ազգային ազատագրական գաղափարախոսության ձևավորման ընթացքը, առանձնահատկությունները և այդ ամենը իրացնելու գործնական քայլերը.

բ/ ցարական, իսկ հետագայում խորհրդային Ռուսաստանի՝ երկու իրարամերժ հասարակարգերի, բայց արցախյան պետականության վերջին բեկորների վերացման, նույն քաղաքական նպատակին հետամուտ համախորհուրդ գործելաճորձ և այդ ամենի ազդեցությունը Հայոց արևելից նահանգների ժողովրդագրական պատկերն աղճատելու և այն ի վնաս հայության փոփոխելու հանգամանքները.

գ/ որ Անդրկովկասյան ազգային երեք հանրապետությունների ծնունդից մի քանի ամիս առաջ՝ 1917թ. դեկտեմբերին, Լեռնային Ղարաբաղում դրվել էին պետական մի միավորի հիմքերը, որն էլ իր ամբողջական տեսքը ստացավ 1918թ. հուլիսին:

Լեռնային Ղարաբաղում գործող իշխանությունը փորձեց հանդես գալ որպես իր լիազորության շրջանակներում գտնվող տարածքների բոլոր ազգերի շահերի պաշտպան.

դ/ հայ ժողովրդի կենսական շահերը, մանավանդ տարածքային կորուստներն ի օգուտ Թուրքիայի և Ադրբեջանի՝ համաշխարհային հեղափոխության բուլշևիկյան ցնորամիտ գաղափարին զոհաբերումը: Հետևաբար, հայության տարածքային կորուստները՝ տվյալ պարագայում Արցախի բռնակցումը խորհրդային Ադրբեջանին փորձել կապել Ստալինի կամ մեկ այլ գործչի անվան հետ, որը տեղ է գտել մեր պատմագրության մեջ, շեղում է երևույթի բուն պատճառը բացահայտելու և, մանավանդ, մեզ մղում սխալ քաղաքական դիրքորոշման: Նշված գաղափարը փաստարկվում է նաև պատմական մորթոյա իրողություններով, ասել է թե՛ խորհրդային ծավալապաշտ կայսրության փլուզմանը համընթաց, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ԼՂՀ կազմավորման համար.

ե/ ԼՂԻՄ տեղն ու դերը խորհրդային համակեցության իրավաքաղաքական համակարգում: Դրա մասին է խոսում ԼՂԻՄ սահմանադրությունը, հետագայում կանոնադրությունը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը, հաստատուն սահմանները:

ի տարբերություն Հյուսիսային Արցախի հայկական շրջանների՝ ԼՂԻՄ-ը, ունենալով ինքնավար կարգավիճակ, կարողացավ ոչ միայն պահպանել երկրամասի հայկական բնութագիրը, այլև Ադրբեջանի հայաշատ մյուս վայրերի համար հայահավաք կենտրոնի դեր ստանձնել: Այս իրավիճակը 80-ական թվականների վերջերին մեկնարկած ազատագրական շարժման համար պարարտ հող էր նախապատրաստել.

զ/ որ Լեռնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց և ԼՂԻՄ-ի կազմավորումից մինչև 1988 թ. խորհրդային ամբողջատիրության պայմաններում

արցախահայությունը, հաղթահարելով տեսանելի և անտեսանելի խութերը, համայն հայության օգնությամբ, անընդհատ պայքարեց իր ազատության ու մայր Հայաստանին վերամիավորման համար: Խորհրդային տարիներին արցախահայության վերելքներով ու վայրէջքներով ընթացող պայքարը 1988թ. փետրվարից սկսած համաժողովրդական ու համազգային ազատագրական շարժման հենքը հանդիսացավ:

Ե/ նախանցյալ ժամանակներից առյուծ թուրքիայի թե կայսերական և թե հանրապետական շրջանների իշխանությունների համար Արցախի՝ իբրև պանթուրքական ծրագրերի իրագործման ամենամեծ խոչընդոտը հանդիսանալու հանգամանքը: Ուստի կարծել, թե Թուրքիայից անկախ Ադրբեջանի «բարի կամեցողությամբ» կլուծվի դարաբաղյան հիմնահարցը, կամ էլ, առանց այդ հիմնախնդրի կարգավորման, ըստ Անկարայի տեսլականի, կստեղծվեն հայ-թուրքական կանոնավոր հարաբերություններ, ճշանակում է՝ կայ քաղաքական միտքն ամլացնել ու նորից մղել անգործության և ուսուպիզմի գիրկը:

Ը/ քարտեզների տեսքով արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման գործընթացները (հավելվածներ 1-9):

Արդի ժամանակներում հայկական երկու հանրապետություններում՝ ՀՀ-ում և ԼՂՀ-ում տեղի ունեցող արմատական տեղաշարժերի, ազգային արժեքների վերախնաստավորման պայմաններում բազում դարերի ընթացքում արցախահայության ազգային ազատագրական պայքարի և պետականակերտման հարուստ փորձի ուսումնասիրությունը, նրա մասսայականացումն ու այդ ամենի ստեղծագործաբար օգտագործումն ունի տեսական և գործնական մեծ նշանակություն:

Պետականակերտման գործընթացում նախկինում թույլ տրված սխալներն ու անտրամաբանական հաշվարկները, որոնք, շատ դեպքերում, խոչընդոտ էին դառնում ազգային հիմնահարցերի լուծման ճանապարհին և կասեցնում արցախահայության բնականոն կյանքը, այսօր դաս են դառնում, հարուստ կենսափորձի յուրացման աղբյուր ծառայում պետական ու քաղաքական գործիչների համար:

Ներկա ժամանակներում, առանց խորամուխ լինելու ոչ հեռավոր անցյալի պատմական իրադարձությունների մեջ, անհնարին է դառնում դարաբաղյան հիմնահարցի լուծումը: Վաղանցյալ շրջանի պատմական իրողությունների հետ ոչ միայն հաշվի չեն նստում Ադրբեջանն ու նրան հովանավորող երկրներն ու կազմակերպությունները, այլև երբեմն այդ ամենն անտեսվում է հայկական դիվանագիտության կողմից:

Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից սկսած՝ հայկական կողմը մշտապես ձգտել և շարունակում է փորձել դարաբաղյան հակամարտությունը լուծել միայն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա՝ դրանով իսկ անտեսելով դարեր ի վեր արցախահայ պետականության գոյության փաստը: Սակայն պատմական անցյալը և արցախյան շարժման ողջ ընթացքը մեզ հնարավորություն են տալիս դարաբաղյան հարցը լուծել երկու սկզբունքների համադրմամբ: Ներկա ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում պայքարել նաև պատմության կեղծարարների դեմ:

Ատենախոսությունում տեղ գտած նյութերը կարող են օգտագործվել տարածաշրջանի և հայոց պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Այն միաժամանակ կարող է հիմք հանդիսանալ նոր հետազոտությունների համար:

**Ուսումնասիրության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԱրՊՀ պատմության ամբիոնի նիստում: Ատենախոսության թեմայով ՀՀ-ում, ԼՂՀ-ում և արտասահմանում իրատարակվել են

մենագրություններ, հողվածներ, գիտական տարբեր մատաչրջաններում կարդացվել գեկուցումներ:

***Թեմայի աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրության աստիճանը:***

Ատենախոսության պատմաքննական վերլուծության համար աղբյուրագիտական հենք են հանդիսացել Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի տարբեր ֆոնդերում պահվող նյութերը, Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ) պահվող վավերագրերը:

Անտիպ հավաքածուներից խնդրո առարկա հարցերի լուսաբանման համար մեծ արժեք ունեն ԼԳՀ պետական արխիվում (այսուհետև՝ ԼԳՀ պետարխիվ), Արցախի պետական պատմաերկրագիտական քանգարանում, ԱրՊՀ հայագիտական կենտրոնում կուտակված փաստաթղթերը: Ուշագրավ տեղեկություններ են պարունակում երկրամասով մեկ ցրված վիմական արձանագրությունները: Պակաս կարևոր չեն Ռուսաստանի արտաքին քաղաքականության (այսուհետև՝ ԱԲՄ), Ռուսաստանի պետական ռազմապատմական (այսուհետև՝ ՐԳՄԱ), սոցիալ-քաղաքական պատմության Ռուսաստանի պետական (այսուհետև՝ ՐԳԱՍՊ) և Ռուսաստանի պատմության պետական (այսուհետև՝ ՐԳԱ) արխիվներում պահպանվող վավերագրերը:

Ատենախոսությունն ամբողջական տեսքի բերելու համար լայնորեն օգտագործվել են տարբեր ժամանակներում մի շարք երկրներում հրատարակված պարբերական մամուլում տեղ գտած նյութերը:

17-18-րդ դարերի արցախահայ ազգային ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության ուսումնասիրման համար կարևոր սկզբնաղբյուրներ են համարվում տվյալ ժամանակաշրջանում և դրանից մի քանի տասնամյակ անց պրած ինչպես հայ, այնպես էլ օտարագրի հեղինակների աշխատությունները: Այդ շարքում առանձնահատուկ տեղ ունի Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի երկասիրությունը<sup>1</sup>:

Նույն ժամանակաշրջանին առնչվող՝ մեզ համար հետաքրքրություն ներկայացնող որոշ փաստեր ներկայացված են Ղուկաս Սեբաստացու<sup>2</sup> և Սիմեոն Երևանցու<sup>3</sup> աշխատությունների մեջ:

1730-40-ական թվականների անցուդարձերի, Արցախի մելիքական տների, հատկապես՝ Պարսից Նադիր շահի հետ ունեցած հարաբերությունների մասին մենք տեղեկություններ ենք ստանում Աբրահամ Կրետացու և Հակոբ Շամախեցու երկերից<sup>4</sup> և 2010թ. Արտակ Մաղալյանի աշխատասիրությամբ հրատարակված «Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները» գրքից<sup>5</sup>:

18-րդ դարի Արցախի մելիքությունների, Ղարաբաղի և հարակից գավառներում ձևավորված խանությունների վրա պարսկական արշավանքների, նույն ժամանակահատվածում Ռուսաստանի Այսրկովկասում վարվող քաղաքականության, 19-րդ դարի ռուս-պարսկական պատերազմների, դրանց՝ արցախահայության մասնակցության մասին են պատմում Միրզա Յուսուֆ

<sup>1</sup> Եսայի կաթ. Հասան-Ջալալյան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դեպեւոց յաշխարհիին Աղուանից, Շուշի, 1839:

<sup>2</sup> Ընտիր պատմութիւն Ղավիթ Բեգին, Վաղարշապատ, 1871:

<sup>3</sup> Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873:

<sup>4</sup> Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոյ և Նատր-շահին պարսից, Վաղարշապատ, 1870; Ս.Տեր-Ավետիսյան, Նադիր Շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940:

<sup>5</sup> Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2010:



Ներսեսովի «Ճշմարտացի պատմություն» աշխատությունը<sup>1</sup>, Հակոբ սարկավազ Ջաքարյան Շուշեցու երկը<sup>2</sup>: Սիրգա Յուսուֆ Ներսեսովի հաղորդած տեղեկությունների մի մասը եզակի է և բացակայում է այլ աղբյուրներում:

18-րդ դարի սկզբնաղբյուրներից ուշադրության արժանի են Վարդան Օձնեցու և Առաքել վրդ. Կոստանյանցի պատմագրական երկերը<sup>3</sup>:

Իրենց աղբյուրագիտական արժեքով կարևորվում են Սադրասի հայրենասիրական խմբակի անդամներ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները<sup>4</sup>: Իրենց ծրագրերի իրագործման ճանապարհին Սադրասի խմբակի անդամները, կարևոր տեղ տալով Արցախի մելիքներին, նրանց մասին տեղեկություններ են հավաքել և ներկայացրել վերոհիշյալ աշխատությունների մեջ:

18-րդ դարի և 19-րդ դարի սկզբների Արցախի քաղաքական պատմության վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուրներ են համարվում մանր ժամանակագրական ակնարկները<sup>5</sup>, ուղեգրական նոթերը<sup>6</sup>, Մատենադարանում պահվող պարսկերեն վավերագրերն ու հրովարտակները<sup>7</sup>:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր նյութեր է պարունակում «Դիւան հայոց պատմութեան» շարքը<sup>8</sup> և Հ.Աճառյանի, Ա.Սաֆրաստյանի ու Ռ.Տիտանյանի աշխատասիրությամբ հրատարակված ժողովածուները<sup>9</sup>:

Քննության ենթակա հիմնահարցերի լուսաբանման տեսանկյունից հրատարակված նշանակություն ունի 1833-1838թթ. Մոսկվայի Լազարյան ճեմարանի հրատարակած „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа“ եռահատոր ժողովածուն<sup>10</sup>: Որոշ սկզբնաղբյուրներում պակասող նյութը լրացնելու են գալիս ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարում» ու Ռահիմ Կուբաթյանի և Բեհրոզ Կուբաթյանի կազմած ժողովածուներում տեղ գտած փաստաթղթերը<sup>11</sup>:

<sup>1</sup> Սիրգա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը՝ բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Զ.Կոստիկյանի, Երևան, 2000:

<sup>2</sup> Մաղպյան Ա., Յակոբ Ջաքարյանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս ամանօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2006, էջ 317-394:

<sup>3</sup> Մատենադարան, ձեռ. 4331, 7822, 7823:

<sup>4</sup> Նոր տետրակ որ կոչի յորդորակ, Սադրաս, 1772; Շահամիր Շահամիրյան, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913:

<sup>5</sup> Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ., կազմեց Վ.Հակոբյանը, հ. 2, Երևան, 1956:

<sup>6</sup> Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2, (1800-1820թթ.), Երևան, 1934:

<sup>7</sup> Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակները, պրակ III, կազմեց Զ.Կոստիկյանը, Երևան, 2005:

<sup>8</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, գիրք Դ, Թիֆլիս, 1899, գիրք Ը, Թիֆլիս, 1908, գիրք Թ., Թիֆլիս, 1911, Դիվան հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, հ. Բ, Երևան, 2003:

<sup>9</sup> Վաւերագրեր հայ-պարսկական յարաբերութեանց մասին, ընդօրինակեց, տառադարձեց և թարգմանեց Հ.Աճառեան, Երևան, 1961; Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797թթ.), աշխատասիրությամբ Ռ.Տիտանյանի, Երևան, 1981:

<sup>10</sup> Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I-III, Москва, 1833-1838.

<sup>11</sup> Армяно-русские отношения в XVIIв., Сборник документов, ч. 1, Ереван, 1953; Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, т. II, ч. II, Ереван, 1967; Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, Сборник документов, т. III, Ереван, 1978; Армяно-русские отношения во второй половине XVIII века, Сборник документов, т. IV, Ереван, 1990; Rahim M. Qubadiyani, Behroz M. Qubadiyani, Documents of Iran and Russia, Relations from Safavid till Qajar. Tehran, 2010.

Մելիքական շրջանի վերաբերյալ փաստագրական հարուստ նյութեր կան Ապրես Բեկնազարյանի աշխատության մեջ<sup>1</sup>: Մեզ հետաքրքրող որոշ հարցեր իրենց արտացոլում են գտել վրացական սկզբնաղբյուրներում<sup>2</sup>:

18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի սկզբների Ղարաբաղի պատմության առանձին հարցերին անդրադարձել են նաև մահմեդական հեղինակները՝ Սիրզա Ադիգյոզալ-բեկը<sup>3</sup>, Սիրզա Ջամալ Ջևանշիրը<sup>4</sup>, Ահմեդ բեկ Ջևանշիրը<sup>5</sup>:

Վերոնշյալ հեղինակները, ամուսնելով որոշ փաստեր և պատմական հանգամանքներ, փորձել են խաներին և նրանց ընտանիքի անդամներին ներկայացնել որպես Ղարաբաղի օրինական տերեր, ինչն էլ այսօր, փաստորեն, ի վնաս հայության՝ փորձում են օգտագործել Ադրբեջանի պատմաշինարարները:

18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի սկզբների Ղարաբաղում և հարակից գավառներում տեղի ունեցած պատմական անցուղարձերը մանրամասն լուսաբանվել են ռուսական և ռուսալեզու աղբյուրներում: Հիշատակության արժանի աղբյուրագիտական և պատմագիտական ուսումնասիրություններ են համարվում Ի.Շոպենի, Պ.Բուստովի և Կ.Եզովի հրապարակումները<sup>6</sup>:

Առանձնապես կարևոր են ռուս զինվորական տարեգիրներ Վ.Պոտտոյի և Ն.Գուբրովի մի աշխատությունները<sup>7</sup>:

Ցարական Ռուսաստանի մեկդարյա (1813-1917թթ.) տիրապետության մասին հետաքրքիր նյութեր են պահպանվել հայկական աղբյուրներում: Ականատեսի վկայություններ են Մեսրոպ Թաղիադյանի ճանապարհորդական գրառումները<sup>8</sup>: Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից ինչպես աղբյուրագիտական, այնպես էլ պատմագիտական արժեք են ներկայացնում Սարգիս Ջալալյանցի, Մակար Բարխուդարյանցի և Հովհաննես Շահխաթունյանցի երկրագրական աշխատությունները<sup>9</sup>: Որոշ արձանագրություններ Մ.Բարխուդարյանցի կողմից վերծանվել են սխալներով, կամ էլ՝ ոչ մինչև վերջ: Սակայն այս հանգամանքը դույզն ինչ չի ստվերում նրա մեծարժեք աշխատանքը: Այդ բանը հետազոտում լրացվել է վիճաբարձետ Ս.Բարխուդարյանի և հուշարձանագետ Ս.Կարապետյանի կողմից<sup>10</sup>:

Խնդրո առարկա հարցի մասին զգալի վիճագրական նյութ է պարունակում Հրաչիկ Հարությունյանի «Շուշի» աշխատությունը<sup>11</sup>:

<sup>1</sup> Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս.Պետերբուրգ, 1888:

<sup>2</sup> Цагарели А., Грамоты и другие исторические документы XVIII столетия относящихся к Грузии, т. I, СПб., 1891, т. II, вып. II, СПб., 1902.

<sup>3</sup> Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950.

<sup>4</sup> Мирза Джамаль Джеваншир Карабаги, История Карабага, Баку, 1959.

<sup>5</sup> Ахмедь-бекъ Джеванширь, О политическомъ существовании Карабагского ханства съ-1747 по 1805 годъ, Шуша, 1901.

<sup>6</sup> Шопен И., Исторические памятники Армянской области в эпоху ея присоединения к Россіиской имперіи, СПб., 1852; Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, ч. I, СПб., 1869; Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом. Документы, СПб., 1898.

<sup>7</sup> Потто В., Кавказская война, т. III, Персидская война 1826-1828, СПб., 1888; Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифлис, 1901; Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902; Н.Дубровин, Закавказье с 1803-1806гг., СПб., 1866; История войны и владычества русских на Кавказе, т. I, СПб., 1871.

<sup>8</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի հայս, Կ. Առաջին, Կալկաթա, 1847:

<sup>9</sup> Ս.արքեպիսկոպոս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մաս Ա, Տփղիս, 1842, մաս Բ, Տփղիս, 1858; Բարխուտարեանց Մ., Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999; Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և իննգ զաւառացն Արարատայ, Կ. Բ, Էջմիածնի, 1842:

<sup>10</sup> Դիվան հայ վիճագրության, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս.Բարխուդարյան, Երևան, 1982; Կարապետյան Ա., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:

<sup>11</sup> Арутюнян Г., Шуши: нововьявленные исторические надписи, Степанакерт, 2008.

Կարևորելով քարտեզագրության ուսումնասիրման նշանակությունը՝ աստենախոսության հեղինակին հաջողվել է լինել ԼՂԴ բոլոր վարչական շրջաններում և, եկեղեցիների, ամրոցների, դղյակների, տապանաքարերի վրա պահպանված արձանագրությունների մի մասն ուսումնասիրելով և հրապարակի վրա առկա նյութերի հետ այդ ամենը համադրելով՝ հնարավորություն ստանալ ամբողջական տեսքի բերելու ուսումնասիրությունը:

Մեր տեսադաշտից ջնն վրիպել նաև Արցախի պատմությանը նվիրված ինչպես հայ, այնպես էլ օտարազգի ճանապարհորդ-ուսումնասիրողների թողած նոթերը<sup>1</sup>:

Ցարական արքունիքի կողմից ռուսական վարչակարգն Այսրկովկասում, այդ թվում՝ Արցախում հաստատելու գործընթացն ուսումնասիրելու տեսանկյունից անհրաժեշտ սկզբնաղբյուր են համարվում Կովկասի կառավարչապետ Ա.Երմոլովի կատարած գրառումները<sup>2</sup>: Արցախում ռուսական զինվորական և քաղաքացիական հաստատությունների կազմակերպման մասին են պատմում Ա.Երևանցի, Վ.Իվանենկոյի և Ս.Եսաձեի աշխատությունները<sup>3</sup>:

Թեմայի մշակման համար արժեքավոր նյութեր են հայթայթվել 19-րդ դարում հրատարակված զանազան փաստաթղթերի ժողովածուներից<sup>4</sup>: Յետաքրքիր և բազմաբովանդակ նյութեր են տեղադրված «Կովկասյան տարեցույց»-ում<sup>5</sup>:

Խնդրո առարկա հարցերի վերաբերյալ խորհրդային և հետխորհրդային շրջանում նույնպես փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներ են տպագրվել<sup>6</sup>:

1917-1923թթ. Արցախաշայության ազատագրական պայքարի և պետականակերտման դրվագներն ուսումնասիրելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ոչ միայն արխիվային փաստաթղթերն ու տվյալ ժամանակաշրջանի մամուլում սփռված նյութերը, այլև դեպքերին մասնակից և ականատես գործիչների հուշագրությունները<sup>7</sup>, որոնք տպագրվել են սփյուռքում, իսկ

<sup>1</sup> Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց Հայկունի, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010; Гмелин С., Путешествие по России, СПб., 1785; Березин И., Путешествие по Востоку, Казань, 1850; Сегаль А., Елизаветпольская губерния, впечатления и воспоминания, Тифлис, 1902; Madame D Chantre, A travers, l'armenie Russe, Paris. (հրատ. թիվը գրքում նշված չէ):

<sup>2</sup> Записки Алексея Петровича Ермолова с приложением, ч. II, 1816-1827гг., Москва, 1991.

<sup>3</sup> Егуазаров С., Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1-2, Казань, 1889-1891; Иваненко В., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества великого князя Михаила Николаевича, Исторический очерк – “Утверждение русского владычества на Кавказе”, Тифлис, 1901; Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, т. I-II, Тифлис, 1902.

<sup>4</sup> Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), вып. I, Тифлис, 1881, вып. III, Тифлис, 1883, вып. V, Тифлис, 1886, вып. VII, Тифлис, 1889, вып. XX, Тифлис, 1894, вып. XXIX, Тифлис, 1901, вып. XXXVIII, Тифлис, 1908; Акты собранные Кавказской Археологической Комиссией (այսուհետև՝ АКАК), т. I-XII, Тифлис, 1866-1904.

<sup>5</sup> Кавказский календарь на 1846-1917гг., Тифлис, 1845-1916гг. (այսուհետև՝ КК).

<sup>6</sup> Материалы по истории народов СССР. Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20-60-ые гг. XIX в., ч. I, Москва-Ленинград, 1936, ч. II, Москва-Ленинград, 1937; Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. I, Ереван, 1972, т. II, Ереван, 1978; Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России (1830-1870), под редакцией Н.А.Тавакаляна, Ереван, 1993; Վաերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), Երևան, 2001:

<sup>7</sup> Միքայելյան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, «Հայրենիք», թիվ 7, էջ 156-167, թիվ 8, էջ 110-123, Ստեփանյան Հ., Արցախյան կամ Շուշվա զնդի պատմությունը, «Հայրենիք», թիվ 1-7, 1934, էջ 89-101; Քիրոս Սարուր, Ղարաբաղի կռիվների շուրջը, «Հայրենիք», թիվ 5, 1934, էջ 126-136, թիվ 6, էջ 123-132; Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ա, Բ, Ե, Երևան, 1990; Արամյան, Ղարաբաղի տագնապը. Օրագրություն (26 ապրիլի 1919), Երևան, 1993; Мелук-Шахназаров З., Записки карабахского солдата, Москва, 1995; Թուսյան Հարություն, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920), Պատմական ակնարկ, Երևան, 2008; Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. 1, Երևան, 2011, հ. 2, Երևան, 2011:

1988 թվականից հետո՝ նաև Հայաստանում: Քննության առարկա հուշագրություններում տեղ են գտել փաստագրական որոշ սխալներ, պատմական անցքերի սուբյեկտիվ գնահատականներ: Պատմաքննական մեթոդով այդ ամենը համադրվել է այլ աղբյուրների ու, հատկապես՝ արխիվային նյութերի հետ, և դրանց հիման վրա արժևորվել վաղանցյալ ժամանակաշրջանի իրադարձություններն ու դրանց մասնակից հիշարժան անհատների կատարած գործերը:

Պետականության համար արցախահայության մղած պայքարի հիմնախնդրի լուսաբանման տեսանկյունից աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Կ.Սիքայեյանի<sup>1</sup>, Ա.Վիրաբյանի<sup>2</sup> խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուները:

1920թ. մայիսին խորհրդային կարգեր հաստատվեցին Լեռնային Ղարաբաղում: Արցախահայության համար սկսվեց ոչ միանշանակ և հակասություններով առեցնու մի ժամանակաշրջան: Ճշմարտությունը վեր հանելու նպատակով օգտվել ենք տարբեր, երբեմն՝ իրարամերժ, սկզբնաղբյուրներից:

Աղբյուրագիտական և պատմագիտական նշանակություն ունեն Գ.Քոչարյանի, Գ.Սեյրանի, Ս.Բարսեղի աշխատությունները<sup>3</sup>: Քանի որ Գ.Քոչարյանի և Գ.Սեյրանի ուսումնասիրությունները հրատարակվել էին մինչև ստալինյան բռնատիրական վարչակարգի արմատավորումը, ուստի նրանց մեջ ճշմարտապատումը առկա է: Պատահական չէ, որ այդ հեղինակները հետագայում մեղադրվել են նացիոնալիզմի մեջ և ենթարկվել հետապնդումների ու բռնաճնշումների:

Խորհրդային 70 տարիների Լեռնային Ղարաբաղի քաղաքական կյանքը լուսաբանելու համար օգտագործել ենք հրապարակի վրա եղած փաստական նյութերը, որոնց մեջ առանձնանում են ԽՍՀՄ, ԱԽՍՀ և ԼՂԻՄ վիճակագրական ժողովածուները<sup>4</sup>: Ուշադրության արժանի են նաև խորհրդային շրջանի ԼՂԻՄ կուսակցական, պետական գործիչների աշխատությունները<sup>5</sup>: Ճիշտ է, դրանք շաղխված են «իմտերնացիոնալիստական», բոլշևիկյան գաղափարներով, սակայն, փաստական նյութի տեսանկյունից՝ կարևորվում են:

Եռյն ժամանակաշրջանում սփյուռքահայ հեղինակներին<sup>6</sup> հաջողվել է քննության առնել ազգային քաղաքականության հիմնախնդիրները:

Արցախյան ազգային ազատագրական պայքարի և պետականության վերակերտման վերաբերյալ հետաքրքիր ու բազմաբովանդակ նյութեր են

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, под редакцией В.Микаеляна, Ереван, 1992.

<sup>2</sup> Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003:

<sup>3</sup> Кочарян Г., Нагорный Карабах, Баку, 1925: Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928: Բարսեղ Ս., Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1963:

<sup>4</sup> ЗФСР в цифрах, Тифлис, 1929; Достигжения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963; Нагорный Карабах за годы Советской власти, Степанакерт, 1969; Азербайджан в цифрах: краткий статистический сборник, Баку, 1964; Нагорно-Карабахская Автономная область Азербайджанской ССР за 60 лет, Юбилейный статистический сборник, Баку, 1983; Народное хозяйство СССР 70 лет, Москва, 1987.

<sup>5</sup> Բաբայան Հ., Վոլոդին Ս., Գասպարյան Մ., Գուլին Գ., Վերկով Բ., Եղբայրական ընտանիքում, Բաքու, 1973; Кеворков Б., В семье единой (Из опыта работы Нагорно-Карабахской областной партизанской организации по интернациональному воспитанию трудящихся), Баку, 1978:

<sup>6</sup> Արեելյան Ա., Մենք ու մեր հարևանները, «Հայրենիք», թիվ 1, 1928, էջ 136-146, թիվ 7, էջ 132-144; Սիմել Սեդ, Հայ կեանքը, «Հայրենիք», թիվ 1, 1926, էջ 137-157, թիվ 4, էջ 130-144; Աթան Ա., Հայ կեանքը, «Հայրենիք», թիվ 2, 1930, էջ 163-173, թիվ 3, էջ 163-173; Ռուբեն, Գանձակ-Ղարաբաղի վեճը, «Դրոշակ», թիվ 2, 1926, էջ 46-52, Սարուր, Կացությունը Ադրբեջանի մեջ, «Դրոշակ», թիվ 4, 1930, էջ 118-126, Կրացյան Ա., Հայաստանի հանրակրթություն, Երևան, 1993:

պարունակում շարժման առաջին իսկ օրվանից մինչև 2012թ. հրատարակված ժողովածուները<sup>1</sup>: Փաստագրական բնույթի հարուստ տվյալներ են հավաքագրվել Վ.Հարությունյանի վեց հատորյակի մեջ<sup>2</sup>:

Կարևոր սկզբնաղբյուրներ են համարվում իրադարձությունների մասնակիցների և ականատեսների օրագրություններն ու հուշագրությունները<sup>3</sup>:

ԼՂՀ կայացման և պետականաշինության հիմնահարցերի ուսումնասիրման տեսանկյունից կարևորվում են Ս.Օհանջանյանի, Ա.Ջալիմյանի և Ս.Նասիբյանի աշխատությունները<sup>4</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին, հայ ազգային ազատագրական պայքարի աշխուժացման պայմաններում, մեծանում է նաև հետաքրքրությունը վաղանցյալ ժամանակների պատմության նկատմամբ: Արցախը համարելով ազատագրական շարժումների օջախներից մեկը՝ հայ հեղինակները փորձել են մեկիքական տների ներկայացուցիչների հերոսական պայքարի դրվագների լուսաբանմամբ տվյալ ժամանակաշրջանի սերնդի մեջ հայրենասիրական մղումներ դաստիարակել: Նման գործ առաջինը ձեռնարկեցին Ալեքսանդր Երիցյանը<sup>5</sup>, Րաֆֆին<sup>6</sup>, Ե.Լալայանը<sup>7</sup>:

Խնդրո առարկա հարցերի քննարկման տեսանկյունից մեզ համար առանցքային նշանակություն ունեն Լեոյի ուսումնասիրությունները<sup>8</sup>: Արժուրելով մեծավաստակ պատմաբանի դերը քննարկվող ժամանակաշրջանի Արցախի պատմության ստվերոտ կողմերի լուսաբանման գործում՝ նկատմբ նաև, որ, որոշ հարցերի պատասխանները փնտրելիս, համապատասխան նյութերի հավանական բացակայության պայմաններում, ոչ ճիշտ եզրակացությունների է հանգել: Այսպես, Լեոն գտնում է, որ Ղարաբաղի խաների դեմ պայքարում հայ մեկիքների հերոսական ջանքերը դատապարտվեցին անհաջողության<sup>9</sup>: Մինչդեռ իրականում Ղարաբաղի խաները ոչ թե պատերազմը շահեցին, այլ պարզապես ճակատամարտում հաղթեցին: Խամսան երկաթվեց ու թուլացավ, բայց պայքարը դադար չունեցավ՝ ինչի արդյունքում երկրամասը միացվեց Ռուսաստանին: Հաջորդ տարիների՝ մեզ

<sup>1</sup> Нагорный Карабах весна-осень 1990, Документы и материалы, Ереван, 1990; Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008; Հայության պայքարը ԼՂԻՍ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, (փաստաթղթեր և նյութեր), Երևան, 2011:

<sup>2</sup> Арутюнян В., События в Нагорном Карабахе, ч. I, февраль 1988г. – январь 1989г., Ереван, 1990; ч. II, январь – декабрь 1989г., Ереван, 1993; ч. III, январь – декабрь 1990г., Ереван, 1993; ч. IV, январь 1991г. – январь 1993г., Ереван, 1994; ч. V, январь 1993г. – июль 1995г., Ереван, 1997; ч. VI, июль 1995г. – май 1997г., Ереван, 1997.

<sup>3</sup> Մկրտչյան Ա., Ի՞նչ է տեղի ունեցել Հաղորդում, Երևան, 1992; Սարգսյան Վ., Ոգու փորձություն, Երևան, 2000; Պետրոսյան Ռ., Արցախ. Պատերազմ, զինադադար, Երևան, 2001; Բունիաթյան Ա., Արյունոտ օրեր, Մարտակերտ 1992 հոկտեմբեր – 1993 մարտ, Երևան, 2000; Բաղդյան Վ., Տեսողաշտ (1988-1994), Ստեփանակերտ, 2011:

<sup>4</sup> Օհանջանյան Ս., Անկախության քայլերը, ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998), Ստեփանակերտ, 1998; Ջալիմյան Ա., Արցախահայության պետականության պատմաիրավական զարգացումը, Երևան, 2004; Նասիբյան Ս., ԼՂՀ. ժողովրդավարական զարգացման և պետականության ամրապնդման ճանապարհին, Ստեփանակերտ, 2010:

<sup>5</sup> Ерицов А., Карабахские мелуки в Грызуа с 1800 по 1808г., “Кавказская старина”, 1872, N2, с. 34-45.

<sup>6</sup> Րաֆֆի, Խամսայի մեկիքությունները, Երկերի ժողովածու, , հ.10, Երևան, 1964, էջ 161-383, նույնի, «Ազատմիք Ղարաբաղի», հ.10, էջ 383-497:

<sup>7</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, 1897, էջ 5-244, գիրք Ե., 1899, էջ 213-269:

<sup>8</sup> Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914; Սահմանավէճեր, Աթէնք, 1990; Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911; Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925; Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, Երևան, 1973; հ.5, Երևան, 1986:

<sup>9</sup> Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 268:

հետաքրքրող որոշ հարցեր քննության առարկա են դարձել «Նիւթեր հայ մելիքութեան մասին» մատենաշարում<sup>1</sup>:

Մելիքների իրավունքների, պարտականությունների, սղնախական շարժման և դրան հաջորդած ազատագրական պայքարի հարցերը մեկնաբանվել են Ֆ.Պողոսյանի<sup>2</sup>, Ջ.Արզումանյանի<sup>3</sup>, Բ.Բալայանի<sup>4</sup>, Ա.Աբրահամյանի<sup>5</sup>, Ա.Ռ.Հովհաննիսյանի<sup>6</sup>, Մ.Ներսիսյանի<sup>7</sup>, Ա.Խաչատրյանի<sup>8</sup>, Պ.Սեյրանյանի<sup>9</sup> աշխատություններում: Նշված հեղինակները հարևանցիորեն են անդրադարձել միասնական հայկական պետականության վերականգնման գործում Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսների դերակատարության հարցերին: Միաժամանակ Արցախի ազատագրման գործում ուժեղացվել է Ռուսաստանի դերակատարությունը:

Հայ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության և Արցախի մելիքների դիվանագիտական փնտրտուքների հարցերին է անդրադարձել Ա.Գ.Հովհաննիսյանը<sup>10</sup>: Անվանի գիտնականի որոշ ընդհանրացումներ մեզ համար անընդունելի են: Այսպես, անդրադառնալով 1672թ. ցար Ալեքսեյ Միխայլովիչին հղած Գանձասարի Պետրոս կաթողիկոսի ուղերձին՝ Ա.Հովհաննիսյանը գրել է. «... կաթողիկոսի գրությունը ավելին չէր, քան Սպահանի հայ խոջաների օգտին արված բարեխոսություն»<sup>11</sup>: Մինչդեռ ցարին հասցեագրված թուղթն իր խորքում քաղաքական նկատառումներ էր պարունակում: Հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում դա առաջին քաղաքական ձեռնարկն էր:

Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունների հիմնապատասխան վրա 18-րդ դարի երկրորդ կեսի արցախահայության ազատագրական պայքարի պատմության ընդգրկումն ուսումնասիրություն է կատարել Պ.Չոբանյանը<sup>12</sup>:

Մեր տեսադաշտից չի վրիպել նաև Ա.Մաղալյանի մենագրությունը<sup>13</sup>: Այն կարևոր ներդրում է Արցախի մելիքական շրջանի պատմության ստվերոտ կողմերի լուսաբանման գործում: Քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական զարգացումների մասին ճիշտ պատկերացում կազմելուն նպաստել են Հ.Կարապետյանի և Մ.Թելունցի ուսումնասիրությունները<sup>14</sup>:

<sup>1</sup> Նիւթեր հայ մելիքութեան մասին, պրակ Ա., Վաղարշապատ, 1913, պրակ Բ, էջմիտին, 1914:

<sup>2</sup> Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1, Երևան, 1966, էջ 197-208:

<sup>3</sup> Արզումանյան Ջ., Սղնախների առաջացումը և ռազմաքաղաքական նշանակությունը, «Լրաբեր հաս.գիտ.», թիվ 9, 1982, էջ 77-86:

<sup>4</sup> Բալայան Բ., Ռազմաքաղաքական իրադրությունը Անդրկովկասում 18-րդ դարի վերջում, Երևանի և Ղարաբաղի ազատագրման զուբովյան նախագիծը «Հայկական բանակ», թիվ 4, 1995:

<sup>5</sup> Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:

<sup>6</sup> Иоанисян А., Россия и Армянское освободительное движение 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, его же, Иосиф Эмин, Ереван, 1989.

<sup>7</sup> Нерсисян М., Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1958.

<sup>8</sup> Армянское войска в XVIII веке, сост. А.Н.Хачатрян, Ереван 1968.

<sup>9</sup> Сеуралян П., Карабах и Россия, страницы истории, Москва, 1997.

<sup>10</sup> Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>12</sup> Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺՂՊՈՒԻ երկրորդ կեսին, Մայր Աթոռ Ս.Էջմիտին, 2006:

<sup>13</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007:

<sup>14</sup> Կարապետյան Հ.Ն.՝, Արցախահայության ազգային-ազատագրական պայքարը XVIII դարի առաջին տասնամյակին, պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Երևան, 2012: Թելունց Մ., Հայ ազգային -ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Երևան, 1995:

Արցախում ցարական Ռուսաստանի շուրջ մեկդարյա տիրապետության հիմնախնդիրները, ինչպես նախախորհրդային, այնպես էլ՝ խորհրդային ու հետխորհրդային շրջանների պատմագիտական միտքն ամբողջական տեսքով չի ներկայացրել:

Իրենց ուսումնասիրած նյութի շրջանակներում այս կամ այն չափով խնդրո առարկա հարցերին անդրադարձել են Ա.Շահխաթունյանը<sup>1</sup>, Դ.Անանյանը<sup>2</sup>, Բ.Իշխանյանը<sup>3</sup>:

19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին Արևելյան Հայաստանին առնչվող քաղաքական բնույթի շատ հարցեր իրենց լուսաբանումն են գտել Վ.Պարսամյանի<sup>4</sup>, Ծ.Աղայանի<sup>5</sup>, Վ.Դիլոյանի<sup>6</sup>, Գ.Գալոյանի<sup>7</sup>, Վ.Սկրտչյանի<sup>8</sup>, ուսումնասիրություններում: Վերոհիշյալ հեղինակներն արևելյան Հայաստանի քաղաքական գործընթացների խորապատկերի վրա հպանցիկ անդրադարձել են նաև Արցախին առնչվող հարցերին:

Ցարիզմի վարչական վերափոխումների բովանդակության և նպատակների բացահայտման տեսանկյունից վերոբերյալ աշխատություններից շահեկանորեն առանձնանում են Վ.Թունյանի ուսումնասիրությունները<sup>9</sup>:

Փաստերի մանրակրկիտ ու բարեխիղճ շարադրանքով և պատմական իրադարձությունների տրամաբանական եզրակացություններով աչքի է ընկնում Գ.Ստեփանյանի աշխատությունը<sup>10</sup>:

20-րդ դարի առաջին տասնամյակներին Այրևովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության էությունը և հայ ժողովրդի ազատագրական պայքարի հանգամանքները լուսաբանելու տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Զ.Սիմոնյանի աշխատությունները<sup>11</sup>:

1813-1917թթ. Արցախի պատմության՝ մեզ հետաքրքրող հարցերի ուսումնասիրման համար ռուսական պատմագրության մեջ ևս առկա է

<sup>1</sup> Шахатунян А., Административный передел Закавказского краја, Тифлис, 1918.

<sup>2</sup> Անանյան Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870) հ. Ա, Բաքու, 1916, հ. Բ (1870-1900), Էջմիածին, 1922:

<sup>3</sup> Իշխանյան Բ., Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբաւորումը եւ հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914:

<sup>4</sup> Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, մաս I, Երևան, 1940; նույնի՝ Հայ ազատագրական շարժումների պատմությունից, (ուսումնասիրություն և փաստաթղթեր), Երևան, 1958:

<sup>5</sup> Агаян Ц., Роль России в судьбах армян и Армении, Москва, 1978.

<sup>6</sup> Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:

<sup>7</sup> Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առձակատումներում (XVI դարից մինչև 1917թ.), Երևան, 2004:

<sup>8</sup> Սկրտչյան Վ., Գեներալ - ադյուտանտ Լազարև, Երևան, 2001:

<sup>9</sup> Тунян В., Восточная Армения в составе России, Ереван, 1989; его же, Русская политика в Армении: мифы и реалии (конец XVIII – начала XX вв.), Ереван, 1998; его же, “Положение” Армянской церкви 1836-1875, Ереван, 2001; его же, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье в первой половине XIX в., Ереван, 2003; его же, Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIXв., Ереван, 2005; его же, Политика самодержавия России в Закавказье в первой половине XIX - нач. XX вв., часть первая, 1800-1826гг., Ереван, 2006, часть вторая, 1826-1836гг., Ереван, 2006, часть третья, 1836-1844гг., Ереван, 2006, часть четвертая, 1845-1876гг., Ереван, 2007.

<sup>10</sup> Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:

<sup>11</sup> Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, հ. Ա, Երևան, 1996, հ. Բ., Երևան, 1996; նույնի՝ Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003, գիրք II, Երևան, 2003:

մասնագիտական գրականություն, որի մեջ պետք է առանձնացնել Ս.Ռոժկովի<sup>1</sup>, Ա.Շոստոկովիչի<sup>2</sup>, Լ.Սենյոնովի<sup>3</sup>, Դ.Մելմանի<sup>4</sup>, Ս.Պուշկարյովի<sup>5</sup> աշխատությունները:

Արցախյան շարժումը և ՀՀ ու ԼՂՀ կազմավորումը հայ պատմաբանների համար հնարավորություններ ստեղծեցին խորամուխ լինելու Լեռնային Ղարաբաղի՝ 1917-1923 թվականների իրադարձությունների մեջ՝ փորձելով վեր հանել պատմական ճշմարտությունը: Այդ տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում Գ.Գալոյանի և Կ.Խուդավերդյանի խմբագրությամբ հրատարակված «Нагорный Карабах, Историческая справка»<sup>6</sup>, Լ.Սկրտչյանի<sup>7</sup>, Բ.Խուդավերդյանի<sup>8</sup>, Վ.Սևյանի<sup>9</sup>, Ռ.Տեր-Պասապյանի<sup>10</sup>, Բ.Ուլուբաբյանի<sup>11</sup>, Ա.Սիմոնյանի<sup>12</sup>, Ա.Սելքոնյանի<sup>13</sup> աշխատությունները:

Քննարկվող ժամանակաշրջանի պատմությունն ամբողջական տեսքով առաջին անգամ ի մի է բերել Հ.Հարությունյանը<sup>14</sup>: Նա բազմաբնույթ նյութերի վերլուծության հիման վրա լուսաբանել է հակասություններով առլեցուն պատմական այդ ժամանակահատվածի ստվերոտ կողմերը: Սեզ հետաքրքրող ժամանակահատվածի վերաբերյալ հետաքրքիր նյութեր են պարունակում Հ.Աբրահամյանի աշխատությունները<sup>15</sup>:

Թեմայի լուսաբանման համար կարևորվում են նաև Կ.Ղահրամանյանի ուսումնասիրությունները<sup>16</sup> և Ա.Տարասովի վերջերս հրատարակած հոդվածների ժողովածուն<sup>17</sup>:

Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացման և դրան հաջորդած տարիների պատմական իրադարձությունների վերաբերյալ ինչպես Բաքվում, այնպես էլ Երևանում հրատարակվել են մի շարք աշխատություններ<sup>18</sup>, որոնց

<sup>1</sup> Рожкова М., Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, Москва-Ленинград, 1949.

<sup>2</sup> Шостакович С., Дипломатическая деятельность А.С.Грибоедова, Москва, 1960.

<sup>3</sup> Семенов А., Россия и международные отношения на Среднем Востоке, Ленинград, 1963.

<sup>4</sup> Мильман Д., Политический строй Азербайджана в XIX – начале XX веков, Баку, 1966.

<sup>5</sup> Пушкарёв С., Россия 1801-1917: Власть и общество, Москва, 2001.

<sup>6</sup> Нагорный Карабах, Историческая Справка, Ереван, 1988.

<sup>7</sup> Սկրտչյան Լ., Արցախ-Ղարաբաղը՝ իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988:

<sup>8</sup> Խուդավերդյան Բ., Ջանգեզուր (1917-1921), Երևան, 1988:

<sup>9</sup> Սևյան Վ., Շուշի, Երևան, 1991:

<sup>10</sup> Տեր-Պասապյան Ռ., Շուշի, Երևան, 1991:

<sup>11</sup> Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, մաս Ա, Երևան, 1994, Նույնի, Արցախի պատմություն, Երևան, 1994:

<sup>12</sup> Սիմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևան, 2000:

<sup>13</sup> Սելքոնյան Ա., Արցախ-Ջավախք պատմական զուգահեռներ, «Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի զեկուցումների նյութեր, Երևան, 2007:

<sup>14</sup> Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996:

<sup>15</sup> Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտը, Երևան, 1991: Նույնի, Թևան, Երևան, 1998, նույնի՝ Մարտնչող Արցախը, գիրք Ա, Երևան, 2003, գիրք Բ, Երևան, 2005, գիրք Գ, Երևան, 2007, նույնի, Արցախահայության հասարակական քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ա.Էջմիածին, 2009:

<sup>16</sup> Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993; նույնի՝ Հյուսիսային Արցախ պատմության քննական վերլուծություն, պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000:

<sup>17</sup> Тарасов С., Мифы о карабахском конфликте, сборник статей, Москва, 2012.

<sup>18</sup> Ադրբեջանում սովետական իշխանության հաստատման և կոմունիստական պարտիայի ստեղծման 40-ամյակը (1920-1960թթ.), Բաքու, 1960: Սողոմոնյան Ս., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, գիտական աշխատանքների ժողովածու, թիվ 7, Երևան, 1967, Բաղդասարյան Ա., Ադրբեջանական ՍՍՀ, Երևան, 1972, Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:



գաղափարախոսական ելակետը մարքսիզմ-լենինիզմն էր: Այդ աշխատությունների մեջ ոչ մի խոսք չկա արցախահայության հակաադրբեջանական ընդվզումների և մարզի հիքնավար կարգավիճակի մասին:

Ադրբեջանի հակահայ գաղութատիրական քաղաքականության ծայրերը բացահայտելու և մեկնաբանելու տեսանկյունից ուշադրության արժանի են Լ.Խուրշուդյանի<sup>1</sup>, Վ.Խոջաբեկյանի<sup>2</sup>, Շ.Սկրտչյանի<sup>3</sup>, Ն.Սարումյանի<sup>4</sup> աշխատությունները: Այս շարքում իրենց արժանի տեղն ունեն Բ.Ուլուբաբյանի աշխատությունները<sup>5</sup>: Հեղինակը, դեպքերի ակամատեսն ու մասնակիցը լինելով, կարողացել է անաչառ ձևով ընթերցողին փոխանցել պատմական իրողությունները: Բ.Ուլուբաբյանը հետազոտել ու գրել է նաև արցախյան շարժման տարեգրությունը<sup>6</sup>:

Արցախյան շարժման վերաբերյալ մանավանդ վերջին տարիներին, հարուստ գրականություն է ստեղծվել<sup>7</sup>:

ԼՂՀ կայացման, նրա ներքին և արտաքին քաղաքականության մասին ուսումնասիրությունները<sup>8</sup> համեմատաբար սակավաթիվ են:

Մասնավորապես՝ պետական շինարարության մանրամասներն ու իրավաքաղաքական գործընթացները ԼՂՀ-ի՝ որպես հայահավաք կենտրոնի, դերակատարության բացահայտումը դուրս է մնացել պատմաբանների և քաղաքագետների ուշադրությունից: Այդ բացը լրացնելու ճանապարհին մի քայլ է համարվում Տ.Յակոբյանի «ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.)» մենագրությունը<sup>9</sup>:

Ադրբեջանական պատմագրությունը նույնպես անդրադարձել է Հայոց արևելից նահանգների միջին, Մոր և Մորագույն շրջանի պատմությանն առնչվող՝ խնդրո առարկա հիմնահարցերին: Ներկայիս Ադրբեջանի հանրապետության մաս կազմող տարածքներում, 1920թ. ապրիլին խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, ադրբեջանական ազգի կազմավորմանը զուգընթաց, մոր իշխանությունների ներկայացուցիչներն ակադեմիական շրջանակներին պատվիրեցին հայ ժողովրդի էթնոպատմաձևակութային ատաղծի վրա, վաղանցյալ ժամանակաշրջանների իրողությունները շուռ ու մուռ տալով, «գտնել» իրենց երկրի հնագույն արմատները և ստեղծել պատմություն: Դեռևս 1960-ական թվականներին Ջիա Բունիաթովի<sup>10</sup> կողմից շրջանառության մեջ դրվեց այսպես կոչված, աղվանական տեսությունը, որն

<sup>1</sup> Хуршудян А., Истина единственныи критерий исторической науки, Ереван, 1969:

<sup>2</sup> Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

<sup>3</sup> Սկրտչյան Շ., Արցախյան գրառումները, Երևան, 2001, Նույնի, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003:

<sup>4</sup> Սարումյան Ն., Լեռնային Ղարաբաղի հիքնավար մարզը 1960-1988 թվականներին, Երևան, 2008:

<sup>5</sup> Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, մաս Բ, Երևան, 1994, նույնի՝ Փորձության օրերի խորհուրդը, Ստեփանակերտ, 2010:

<sup>6</sup> Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997:

<sup>7</sup> Քեյսի որ ատենախոսության ներածության նպատակը ոչ թե հիմնահարցի ողջ պատմության, այլ սոսկ նրա ուսումնասիրության աստիճանի բացահայտումն է, ուստի նպատակահարմար է բավարարվել միայն մեզ հետաքրքրող հետազոտությունների ներկայացմամբ: Հարցին հանգամանորեն անդրադարձել է Է.Մինասյանը իր «Արցախյան շարժման պատմության ուսումնասիրության արդի վիճակն ու խնդիրները» հոդվածի մեջ, տես՝ ԼՂՀ. անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2007:

<sup>8</sup> Нагорно-карабахская республика: Путь к вершинам, Степанакерт, 2001; Ղահրամանյան Վ., ԼՂՀ-ն՝ Ղարաբաղում պետականության զարգացման օրինաչափ արդյունք, Երևան, 1999; Հակոբյան Ս., Պետական ավարատը և նրա զարգացման հիմնական միտումները (ԼՂՀ նյութերը), Երևան, 2003:

<sup>9</sup> Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Երևան, 2011:

<sup>10</sup> Буниатов З., Азербайджан в VII – IX вв., Баку, 1965.

էլ հետագայում առավել «գարգացվեց» նրա աշակերտների<sup>1</sup> կողմից: Այդ շինծու տեսությունը Ադրբեջանի կուսակցական և պետական մարմինները սկսեցին հրամցնել արցախահայությանը: 1966թ. մարտի 20-ին Ստեփանակերտում՝ կուսակցական ակտիվի ժողովում, Ադրբեջանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Վելի Ախունդովը հայտարարել է, որ հանրապետության պատմաբանները հավաստի տվյալներով հաստատել են, որ Ղարաբաղում ապրող հայերի և ադրբեջանցիների նախնիները մինևույն արմատից են սերվել<sup>2</sup>: «Աղվանական տեսությունը» ավելի հիմնավոր դարձնելու նպատակով Ադրբեջանի պատմաբանները սկսեցին հավատաքննության ենթարկել ինչպես հայ, այնպես էլ այլ ազգի, մասնավորապես՝ պարսիկ մատենագիրների տեղեկությունները՝ սկզբնաղբյուրներից ջնջելով հայ էթնոանվանումը:

Այդ գործում էական հաջողություններ չունենալով, 1988 թվականից սկսած, Ադրբեջանի պատմաբանները նոր տեսակետ մոգոնեցին, ըստ որի հայերը Արցախ-Ղարաբաղում հայտնվել են միայն Թուրքմենչայի պայմանագրից հետո<sup>3</sup>: Ավելին, նրանք աշխարհին փորձում էին ներկայացնել իրենց «մեծահոգությունը», որ հայերին իրենց հողում հյուրընկալել են, իսկ վերջիններս երախտամոռ են գտնվել: Սակայն նկատենք, որ նույն Բաքվում, 1965թ. Գ.Աբրդուլակի հրատարակած մեծագրության<sup>4</sup> մեջ, իրենց իսկ հայրենակիցը սկզբնաղբյուրների հիման վրա գրել է. «Ղարաբաղի մարզը ընդգրկում էր... հինգ հայկական մելիքություններ, որի տերերը Նադիր շառի ժամանակ իրենց տարածքներում օգտվում էին իշխանների հաստուկ բոլոր արտոնություններից և ունեին սեփական զինված ուժեր...: Փանահ Ալին իրեն խան հռչակելով (1748-1760թթ.), ձգտել է մելիքներին իրեն ենթարկեցնել՝ օգտվելով ստոր մեթոդներից և հնարքներից»<sup>5</sup>: Ավելին, 1823թ. ռուսական հարկացուցակներով Ղարաբաղի հինգ մահալների ազգաբնակչության 96,67 տոկոսը հայեր էին, իսկ 3,33 տոկոսը՝ թաթարներ<sup>6</sup>:

Յետխորհրդային շրջանի Ադրբեջանի ղեկավարությունը, ավելի հեռուն գնալով, իրենց գիտնականներին հորդորում է հիմնավորել, որ ոչ միայն ԼՂՀ-ն, այլ նաև ՀՀ-ն կազմավորվել են ադրբեջանական հողերի վրա: Այդ գործում առավել ջանադիր էր Ադրբեջանի նախկին նախագահ Յեյդար Ալիև<sup>7</sup>: Նույն թափով այդ կեղծարարությունը շարունակում է Իլհամ Ալիևը, որը 2005թ. ղեկտեմբերին Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում արտասանած ճառում<sup>8</sup>, հավաստիացրել է, որ պատրաստ է վճարել ցանկացած գումար, միայն թե իրենց պատմաբաններն ապացուցեն, որ Լեռնային Ղարաբաղի հայերը եկվոր են:

<sup>1</sup> Гейушев Р., Христианство в Кавказской Албании, Баку, 1984, Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э. – VIII в. н.э.), Баку 1986, Сумбатзаде А., Азербайджанцы - этногенез и формирование народа, Баку, 1990, Ахундов Д., Архитектура древнего и средневекового Азербайджана, Баку, 1986.

<sup>2</sup> ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Ս.Խանյան, ԱրՊՀ պատմություն, էջ 21:

<sup>3</sup> Адиев И., Нагорный Карабах: История. Факты. События, Баку, 1989; Исмаилзаде Д., Население городов Закавказского края в XIX начале XXв., Москва, 1991; Мамедов С., Азербайджан по источникам XV- первой половине XVIIIвв., Баку, 1993; “Карабах”, Баку, 2004; Мамедиаров И., Т.Мусаев, Армяно-азербайджанский конфликт: История, право, посредничество, Тула, 2007; “Карабах вчера, сегодня и завтра”, материалы научно-практических конференций, вторая часть, Баку, 2009.

<sup>4</sup> Абдуллаев Г., Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965.

<sup>5</sup> Абдуллаев Г., նշվ. աշխ., էջ 90-92:

<sup>6</sup> The 1823 Russian survey of the Karabagh province: A Primary Source on the Demography and Economy of Karabagh in the Early 19<sup>th</sup> Century, Annotated translation from the Original 1866 edition with an introduction and Commentary by George A.Bournourtian, MAZDA PUBLISHERS. Ins Costa Mesa, California 2012, p. 439.

<sup>7</sup> “Бакинский рабочий”, 23 декабря, 1997, 23 января, 1998, 31 марта, 1998.

<sup>8</sup> Բալայան Վ., Արցախի խորհրդային և ազատագրական պայքարի տարիների պատմության արտացոլումը պատմագրության մեջ: «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2008, թիվ 2, էջ 64:

Պատմության կեղծարարները, ոգևորվելով իշխանությունների բացահայտ աջակցությունից, մի ամենախաղեպ արշավ սկսեցին<sup>1</sup>: ծուռ հայելու մեջ ներկայացնելով Հայոց արևելից նահանգների հեռավոր անցյալի իրողությունները:

Արցախի 18-19-րդ դարերի պատմական իրադարձությունների վերաբերյալ Բաքվում հրատարակվել են մի շարք աշխատություններ<sup>2</sup>: Եթե մինչև արցախյան շարժումն ադրբեջանական պատմագրության մեջ ակնարկային ձևով էր խոսվում Արցախի մելիքների հայկական ծագման մասին, ապա վերոնշյալ ուսումնասիրություններում դրանք խստաբանակալայում են:

Եթե խորհրդային ժամանակահատվածում Ադրբեջանի պաշտոնական շրջանակները և պատմաբանները հիմնականում ձգտում էին «գիտական» տեսանկյունից յուրացնել Հայոց արևելից նահանգների էթնոմշակութային տարածքը, ապա ներկա ժամանակներում դրան գումարվեց ևս երկու գերխնդիր.

ա) սեփական ժողովրդին, մասնավորապես՝ երիտասարդությանը մոլորության մեջ պահելով՝ նրանց մեջ սերմանել հակահայկական տրամադրություններ և, անհրաժեշտության դեպքում, վերջիններիս մղել արկածախնդրության,

բ) զոհի կերպարանքով ներկայանելով համաշխարհային հանրությանը՝ փորձել մեծ տերություններին տրամադրել ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ, ըստ այդմ՝ դարաբանոյան թնջուկը լուծել իրենց օգտին:

Արցախյան հիմնահարցի ակունքների, ազատագրական պայքարի ընթացքի մանրամասներին և դրանց հետևած գործընթացներին անդրադարձել են Ադրբեջանի գիտական ու քաղաքական շրջանակները<sup>2</sup>: Ոչ միայն սեփական ժողովրդին, այլ նաև համաշխարհային հանրությանն ապակողմնորոշելու համար աշխատանքների մեծ մասը տպագրվել է օտար լեզուներով և տարբեր երկրներում:

Այսպիսով, վերոնշյալ ձեռագրերից արխիվային փաստաթղթերից, բազմազան այլ սկզբնաղբյուրներից, մամուլից, թեմային առնչվող հրատարակված գրականությունից քաղված փաստերն ու մեկնաբանությունները նպաստել են ատենախոսության առանցքային մասերի գիտական ընդհանրացումներին:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրներից և գրականության ցանկից ու հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրության աստիճանը:

**Առաջին գլուխը** կրում է «Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը (17-րդ դարի երկրորդ կեսից – 1813 թվական)» վերնագիրը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից՝ ա) Ազգային ազատագրական շարժման գաղափարաբանության ծնունդը և առաջին քայլերը Արցախում, բ) Եսայի Հասան-Ջալալյանի «Նոր նորոգման» տեսլականի իրագործումը Արցախում, գ)

<sup>1</sup> Описание Карабахской провинции, составленное в 1823 году. Подготовки ко 2-ому переизданию и автор предисловия З.Гаджиева, Баку, 2003; Амирбекова Н., Вопросы военной истории Азербайджана в период ханств. Баку, 2004, Гаджиева С., Азербайджан во внешней политике правительств Екатерины II. Баку 2004; Гаджиева З., Карабахское ханства: Социально экономические отношения и государственные устройства, Баку, 2008. Kuzaril T., Qarabag: Qarabag tarixinin saxtaldasirlimasi aleyhina. Bakı, 2002.

<sup>2</sup> Конфликт в Нагорном Карабахе: Сборник статей /сост. И.Шукюров/, Баку, 1990; Алиев Н., Вопросы международного права в Нагорно-Карабахском конфликте, Тбилиси, 2009; Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2009; Suleymanli N., An Analysis of the Nagorno-Karabakh Problem, TROINC – Famagusta, 2009;

Պետականության վերականգնման փորձերը Արցախում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին:

16-րդ դարի կեսերից սկսած հայ հանրության առաջադեմ գործիչները, մտահոգ երկրի ճակատագրով, ուղիներ էին փնտրում՝ ազատագրելու հայրենիքը:

Բուն մայր երկրում չկար քաղաքական որևէ գործոն կամ սոցիալական ներքին որևէ ուժ, որը զորավիգ լիներ կամ ձգտում ու հնարավորություն ունենար օգնելու, միավորելու հայ ժողովրդի ջանքերը, նպատակ ու ընթացք տալու ազատագրական մղումներին: Նման պայմաններում ռուսական արքունիքի հետ հարաբերությունները վարում էին Արցախի մելիքները, որոնց մոտ վառ էին մնացել հայկական պետության գաղափարները, և «գլխավորապես Գանձասարի կաթողիկոսները, որոնք բավականին անկախ էին պարսկական իշխանություններից»<sup>1</sup>: «Արցախի հայ ֆեոդալները, - կարդում ենք 1532թ. հիշատակարաններից մեկում, - համարվում են մեր ժողովրդի և ամբողջ քրիստոնյաների պարծանքը»<sup>2</sup>:

Արցախի մելիքական տների ներկայացուցիչների մեծ մասը, Գանձասարի կաթողիկոսներին թև ու թիկունք դառնալով, 17-րդ դարի վերջերից մի անմախաղեպ և աննահանջ պայքար սկսեցին հայկական թագավորության վերականգնման համար:

Գանձասարի դերն Արցախի հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման և ազգային ազատագրական պայքարին նոր որակ հաղորդելու տեսանկյունից ավելի էր կարևորվում, որովհետև Հասան-Ջալալյան տոհմի ձեռքին կենտրոնացված էր Խաչենի՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ՝ հոգևոր իշխանությունը: Հայկական պետականության պատմության մեջ կառավարման մոդելի այս ձևաչափը թույլ էր տալիս ներքին կյանքում առավել մոտ լինել ժողովրդին, իսկ արտաքին ճակատում՝ վարել հավասարակշռված ճկուն քաղաքականություն:

Գանձասարի Պետրոս կաթողիկոսի 1672թ. ուղերձը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, ըստ էության, առաջին քայլն էր՝ շոշափելու հայության նկատմամբ ունեցած ռուսաց միապետների տրամադրությունը: Գանձասարի կաթողիկոսի այս քայլը վարակիչ էր ինչպես էջմիածնի հայրապետի, այնպես էլ՝ Արցախի ու Սյունիքի մելիքների համար:

Դեռևս 17-րդ դարի վերջերից սկսած՝ Եսայի Հասան-Ջալալյանը<sup>3</sup> իր համախոհների շրջանում արմատավորում է հայրենի երկրի ազատության համար անընդհատ և անզիջում պայքարի գաղափարը:

1720-ական թվականներին հյուսիսային լեռնականների դեմ ինքնապաշտպանության գործը տարերայնորեն վերածվում էր պարսկական իշխանության դեմ ուղղված ժողովրդաազատագրական շարժման: Դրա դեկավարները ժամանակին այս երևույթի մեջ նշմարում էին հայոց ազգային հանգամ իշխանության «նոր նորոգում»<sup>4</sup>:

Ցարական արքունիքն այդ օրերին ոչ թե ձգտում էր աջակցել արցախահայությանը, այլ ուղիներ էր որոնում՝ լեզու գտնելու Պարսկաստանի և Թուրքիայի հետ:

Բազմամիլիոնանոց մահմեդական երկրներով շրջապատված քրիստոնեական մի փոքրիկ կղզյակը, բնականաբար, չէր կարող չարժել անգամ

<sup>1</sup> Г.Эзов, 62վ.աշխ., էջ XII:

<sup>2</sup> М. Зулалян, Армения в первой половине XVIIв., Москва, 1971, с. 18.

<sup>3</sup> 1699 թվականին Երեմիան աթոռակից կաթողիկոս է օծում իր եղբորորդի Եսայուն: Տես՝ Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 81:

<sup>4</sup> Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոյ յաշխարհին Աղուանից, էջ 58:

քրիստոնեության շղարշով պարուրված գիշատչի փտորժակով ծավալապաշտ կայսրությունների ոչ հետաքրքրությունը և ոչ էլ՝ սովորական մարդկային գութը: Սա այն դասերից մեկն է, որ մենք պետք է սերտենք և մոռացության չտանք:

Ստեղծված պայմաններում սղնախների առաջնորդները, շարունակելով բանակցությունները ռուսական իշխանությունների հետ, միաժամանակ թուրքական ազդեցիկ կանխելու միջոցներ էին որոնում:

Գերված թուրք փաշաներից մեկը բացեց Արևելքում, մասնավորապես՝ Արցախի նկատմամբ Բարձր Դռան վարվելիք քաղաքականության հեռապատկերները. «Չայն այս մեջ չախտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի»<sup>1</sup>:

Երեք դար անց, Տյուրիխյան արձանագրության ստորագրումից հետո էլ Թուրքիայի վարչապետը և, նրան ձայնակցելով, մյուս պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանակները, միշտ հիշեցնում են, որ, իրենք իրենց նախնիների պատգամներին հավատարիմ, փորձելու են վերացնել հայկական սեպը, սվյալ պարագայում Ղարաբաղյան հարցը լուծելու են թուրքական սցենարով:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ թուրքական պետությունը, լինի դա օսմանյան, երիտթուրքական, քեմալական կամ էլ մեկ այլ տիպի, Ղարաբաղի նկատմամբ ունի հստակ և անփոփոխ դիրքորոշում:

Փաստորեն, խորանուխ լինելով երեք հարյուր տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների մեջ, մեր մոտ հստակ պատկերացումներ են ձևավորվում երկու երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի միջպետական հարաբերությունների ներկայիս հավանական զարգացումների մասին:

Չնայած երկրամասն արնածոր վերքեր ուներ, բայց և այնպես չընկրկեց թշնամու առաջ և հետագա տասնամյակներում նոր եռանդով շարունակեց պայքարը:

Սղնախների հայերի սխրանքները համընկնում էին թուրք նվաճողների դեմ ոտքի ելած Պարսկաստանի ժողովուրդների համաշափղ ընթացքին, որի գլուխ կանգնեց Նադիր շահը: Իրանի ապագա խորամանկ տիրակալը տեսնում էր հայերի հակաթուրքական տրամադրվածությունը և, օսմանցիների դեմ մղվող վճռական գոտեմարտում, հայ մելիքների վրա նայում էր որպես հուսալի դաշնակցի:

Նադիրն արցախահայերի և մելիքների ռուսամետ տրամադրություններին վերջ տալու, նրանց սիրաշահելու և ռազմական կարողություններն օգտագործելու նպատակով ոչ միայն մելիքներին հաստատում է իրենց իշխանության մեջ, այլև ընդգծված կարգավիճակ է շնորհում՝ ծնունդ տալով նոր վարչական միավորի՝ Խանսայի (արաբերեն՝ հնգյակ, պարսկերեն՝ «Մահալե խանսե») մելիքություններին: Չնայած նախորդ սղնախական շրջանի համեմատությամբ Արցախի անկախ կարգավիճակն ինչ-որ տեղ սասանվեց, այնուամենայնիվ, պարսկական տերության կազմում երկրամասը ուներ լայն ինքնավարություն:

Ըստ էության, ուշ միջնադարում Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մի հատվածում ֆեոդերատիվ կառուցվածքով վերածնվեց հայկական մի նոր ձույլ պետական միավոր, որի սահմանները ձգվում էին Գանձակի մատույցներից մինչև Արաքս գետը:

Դժբախտաբար, Նադիրի սպանությունից հետո Արցախի մելիքական տների ներկայացուցիչները ոչ միայն չկարողացան օգտագործել ազգային պետականությունը վերականգնելու նպատակով պահը, այլև ինչ-որ չափով կորցրին նախկին կարգավիճակը: Դրան հակառակ՝ ստեղծված խառնակ վիճակից առավելագույնս օգտվեց թուրքախոս քիվանշիր ցեղի առաջնորդ Փանսահը: Նա պարսից Ադիլ շահից խանի տիտղոս ստացավ և առավել սանձարձակ գործողությունների դիմեց:

<sup>1</sup> Армяно-русские отношения, т. II, часть II, с. 249.

Անկայուն երկրում իշխանությունը պահելու համար այս քայլով պարսից տիրակալը, հանձին Փանահի և Նոր ձևավորվող վարչական միավորի, փորձում էր ունենալ հուսալի դաշնակից: Մյուս կողմից էլ Ադիլ շահը ռուսական կողմնորոշում ունեցող Արցախի մելիքներին հակակշիռ զսպող ուժ է ստեղծում:

Լեոն գտնում է, որ Ղարաբաղի խաների դեմ պայքարում հայ մելիքների հերոսական ջանքերը դատապարտվեցին անհաջողության<sup>1</sup>: Մինչդեռ իրականում Ղարաբաղի խաները ոչ թե պատերազմը շահեցին, այլ պարզապես ճակատամարտում հաղթեցին: Դրա մասին է խոսում նաև դեպքերի զարգացման հետագա ընթացքը: Խամսան երկատվեց ու թուլացավ, բայց պայքարը դադար չունեցավ: Իրավական տեսանկյունից երկրամասը պատկանում էր մելիքներին և հայ ազգաբնակչությանը:

Դժվարին այս ժամանակաշրջանում Ղարաբաղ է գալիս Յովսեփ Էմինը: Նա մեծ հույսեր էր կապում Արցախի մելիքների հետ՝ նրանց մեջ տեսնելով ապագա հայկական պետականության հիմնաքարը:

Չնայած մելիքների ծանր վիճակին՝ քննարկվող ժամանակաշրջանի մեկ այլ խոշոր գործիչ Մովսես Բաղրամյանը գտնում է, որ հայկական պետականության անկումից հետո միակ կազմակերպված ուժը մնում են Արցախի իշխանական տների ներկայացուցիչները, և հայությունը, նրանց շուրջը համախմբվելով, պետք է իրականացնի Հայաստանի ազատագրության գործը<sup>2</sup>:

Արցախի մելիքներին սիրաշահելու և պայքարի մեջ ներգրավելու նպատակով 1789թ. տպագրված Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում նրանց պատշաճ տեղ է նախանշվում. Հայաստանի նախարարը (նախագահը, -Վ.Բ.) պետք է ընտրվի Ղարաբաղում՝ երկրի տարբեր գավառներից այդտեղ եկած պատգամավորների կողմից: Ընտրովի ներկայացուցչական օրենսդիր այդ մարմինը կշարունակեր գործել Ղարաբաղում<sup>3</sup>:

Իսկ աստրախանաբնակ մեծահարուստ Մովսես Սարաֆյանը գտնում էր, որ Հայաստանը Թուրքիայի և Պարսկաստանի լծից ազատագրելուց և պետություն ստեղծելուց հետո Արցախի մելիքներից մեկին պետք է կարգել թագավոր<sup>4</sup>:

Իբրահիմ խանից հալածական մելիքների մոտ տակավին կենսունակ էր հյուսիսի մեծ հարևանի օգնությամբ երկրի փրկության ծրագիրը: Նրանք, Ճիգերի վերջին լարումով ի մի բերելով երկրամասի տնտեսական ու ռազմական կարողությունները, նորից լծվեցին հայկական պետականության վերակերտման գաղափարին:

Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813թ հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի հաշտության պայմանագրով:

*Երկրորդ գլուխը* «Պայքար ազգային ինքնության և պետականության գաղափարի պահպանման համար (1813-1917թթ.)», բաղկացած է երկու ենթագլուխներից՝ ա) Մելիքական կարգի վերացման ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, դրա նպատակներն ու հետևանքները և բ) Արցախի վարչական կարգավիճակը և քաղաքական կացությունը ռուսական կայսրության կազմում:

Արցախի մելիքները, ոգևորված ռուսական զենքի հաղթանակներով և, հաշվի առնելով արցախահայ պետականության վերականգնման վերաբերյալ ցարական կառավարության՝ նախկինում տված խոստումներն ու հավաստիացումները, 1806թ.

<sup>1</sup> Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 268:

<sup>2</sup> Նոր տետրակ, էջ 118-120:

<sup>3</sup> Շահամիր Շահամիրյան, Որոգայթ փառաց:

<sup>4</sup> А. Иоаннисян, Иосиф Эмин, с. 220, 223.

մշակում են Արցախի ինքնավարության ծրագիր և, արքունիք հանձնելու համար, ներկայացնում Մինաս Լազարևին:

Հայկական պետականության վերականգնման վերաբերյալ համապատասխան ծրագրեր է կազմել նաև Քրիստափոր Լազարյանը:

Այս, ինչպես նաև նախորդ ժամանակներում ռուսական արքունիքին ներկայացված հայկական պետականության վերականգնման ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա: Սակայն դա չխանգարեց Արցախի մելիքներին՝ շարունակել պայքարը:

Հայ հասարակական և քաղաքական շրջանակները, թերևս ուշացած, հասկացան Արցախի մելիքներին և նրանց հպատակներին Վրաստան և այլ շրջաններ տեղափոխելու ցարական քաղաքականության նպատակն ու էությունը:

Կտրվելով հայրենիքից, զրկվելով նյութական հնարավորություններից և զինական ուժից՝ Արցախի մելիքները դադարեցին քաղաքական գործոն լինելու հանգամանքից:

Ցարական կառավարությունն Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու նպատակով տեղացի իշխաններին զրկում էր պետական պաշտոններ վարելու իրավունքից՝ դրանք վերապահելով ռուս չինովնիկներին:

Դեռ ավելին, ցարական արքունիքը հավասար կարգավիճակ սահմանեց մելիքական գերդաստանների ավագ և կրտսեր անդամների միջև: Շուկայական տնտեսության պայմաններում նախկինում գոյություն ունեցած անտրոհելի կալվածքներն արագաթափ հավասարաչափ բաժանվեցին մելիքական տան բոլոր անդամների միջև: «Բաժանիր, որ տիրես» հայտնի բանաձևն իր ավերիչ և սև գործը կատարեց:

Շուկայական տնտեսության օրենքներին անծանոթ և պահպանողական կենսակերպով ապրող մելիքներն ի վիճակի չէին մրցակցել խաղի նոր կանոններին վարժված առևտրավաճառուական դասի հետ: Նրանք ստիպված ունեցվածքի և հողերի մի մասը վաճառելով՝ փորձում էին իրենց դրսևորել քաղաքային կյանքի այլ ասպարեզներում:

Նման պայմաններում թաթար խաներն ու բեկերը, զարտուղի տաբեր ճանապարհներով, կաշառքներով և շողոքոթությամբ, սիրաշահելով ռուս աստիճանավորներին, տեր էին դառնում հայկական գյուղերին և մելիքների նախկին տիրույթներին:

Մելիքական տների վերացման և նրանց վերջնականապես հայրենիքից կտրելու քաղաքականությունը 1920-1930-ական թվականներին վերջնական ավարտին հասցրեց խորհրդային իշխանությունը:

Եթե մելիքական տների ներկայացուցիչներին հայրենիքից հեռացնելու համար ցարական արքունիքը որոշակի իրավիճակներ և «պայմաններ» էր ստեղծում, ապա խորհրդային իշխանությունն այդ նպատակին հասնում էր բռնի ուժի և ամենադաժան մեթոդներով:

Արևելյան Հայաստանը, այդ թվում՝ Արցախը, անցնելով Ռուսաստանին, հայ ժողովուրդը չստացավ ցանկալի ազատությունը և բազում սերունդների երագած ազգային պետականություն ունենալու հնարավորությունը:

Ցարական կառավարությունը ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հունքային կցորդը և արտադրված ապրանքների շուկա, «այն կապելով Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով իբրև մեկ մարմին, և ստիպել տեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսաբար», ինչպես գրում էին Պասկևիչը, սենատորներ Մեչնիկովն ու Պ.Կուտախսովը<sup>1</sup>:

<sup>1</sup> "Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIXв.", ч. 1, Москва-Ленинград, 1936, с. 21.

Ցարական արքունիքը հստակ գիտակցում էր, որ Այսրկովկասում առաջադեմ գաղափարների նկատմամբ ընկալունակը հայությունն էր, իսկ նրա մտավորականությունը, ազնվականությունն ու եկեղեցին վաղանցյալ ժամանակներից եկած հայոց պետականության լավագույն գաղափարների կրողներն են: Հետևաբար Այսրկովկասում, 1820-ական թվականներից սկսած, բարեփոխումների հիմնական նպատակն էր այդ ամենը չեզոքացնել և ի չիք դարձնել:

Ղարաբաղն Արևելյան Հայաստանի այն եզակի երկրամասերից էր, որտեղ հայությունը միատարր էր և ապրում էր հայաշխարհին հատուկ, դարերից եկած օրենքներով ու ավանդույթներով: Ցարական իշխանությունները, Ղարաբաղը կտրելով բուն հայկական միջավայրից, տարրալուծելով մահմեդական խառնամբոխի մեջ, այն կդարձնեին կանխատեսելի ու հեշտ կառավարելի:

Երկարատև փնտրտուքներից հետո, 1840թ. ապրիլի 10-ին, Նիկոլայ Առաջինը հաստատում է Այսրկովկասի նոր վարչական բաժանման նախագիծը: Այսրկովկասը բաժանվեց Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի: Ղարաբաղը ներառվեց վերջինիս կազմի մեջ:

Ինչպես 1840թ., այնպես էլ 1846 և 1867 թվականների օրենքներով, ցարիզմը, անտեսելով տարածաշրջանի առանձնահատկությունները, ստեղծում է խառը ազգային խայտաբղետ կամ ունեցող և զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած ժողովուրդներով բնակեցված վարչական նոր միավորներ: Բնականաբար, այդ ամենը հաշվարկված էր: Նպատակը հստակ էր. ցարիզմը ձգտում էր իր ներքին խնդիրները լուծելու համար իրավիճակ ստեղծել, անհրաժեշտության դեպքում էլ կայսրության տարածքում ապրող ազգային փոքրամասնություններին լարել իրար դեմ: Ցարիզմը հայ ժողովրդին անսքող ձևով ցույց տվեց, որ պետք է հրաժարվել ազգային ինքնավարության պատրանքներից:

Կայսրության կազմում Արևելյան Հայաստանը, բաժան-բաժան դառնալով, ազգային իղծերի իրագործման ճանապարհին կորցրեց միասնականությունը և նպատակին հասնելու հնարավորությունը: Հետագա տասնամյակներում հայ ժողովրդի լուսավոր գավակներից մեծ ջանքեր պահանջվեց՝ թոթափելու ստրկամտությունն ու բոլոր կենսունակ ուժերը համախմբելու մեկ նպատակի շուրջ և, ըստ այդմ էլ, ազգային պետականություն վերակերտելու:

Եթե 1840-ական թվականներից ցարիզմի դեմ արևելահայության, այդ թվում արցախահայության շրջանում ընթացող հեղափոխական խնդրումները հիմնականում սոցիալական ուղղվածություն ունեին, ապա 1860-ական թվականներից այն սկսում է ստանալ ազգային-ազատագրական պայքարի բնույթ:

19-րդ դարի 80-ական թվականներին Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Գանձակում ստեղծվեցին գաղտնի կազմակերպություններ ու խմբակներ, որոնց մոտ սկսվում են խնդրվել հայկական ինքնավարության ստեղծման գաղափարներ:

Արցախում ազգային-ազատագրական գաղափարների տարածման և հայ հեղափոխական ուժերի մեկտեղման գործում մեծ էր ՀՅԴ «Ապառաժ»-ի կառույցի դերակատարությունը:

Ազգային պետականությունից զրկված հայության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային-կրթական կյանքն ինքնահոսի չմտնելու և այն ուղղորդելու նպատակով դաշնակցությունը տեղերում ստեղծեց ոստիկանական, դատական, կրթական մարմիններ:

Առանձնապես տպավորիչ էր 1905-1907թթ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ ՀՅԴ Արցախի կառույցի գործունեությունը: ՀՅԴ «Ապառաժ»-ի կոմիտեն Արցախում ստեղծեց «ինքնապաշտպանության ժամանակավոր գործադիր մարմին»,



որը միաժամանակ հասարակական-քաղաքական բնույթի այլազան գործառույթներ էր իրականացնում:

*Երրորդ գլուխը՝ «Պայքար պետականության վերակերտման և պահպանման համար (1917– 1923թթ.)»՝ բաղկացած է երկու ենթագլուխներից՝*

ա) Արցախահայ պետականության վերակերտումը (1917թ. դեկտեմբեր-1920թ. մայիս) և բ) Քաղաքական կացությունը Լեռնային Ղարաբաղում (1920թ. մայիս – 1921թ. հուլիս):

1917թ. փետրվարին և հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական ցնցումներից հետո ՀՀԴ Ղարաբաղի «Ապառաժ» կոմիտեն նպատակահարմար գտավ գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերի համադրմամբ, կյանքի կոչել լիազոր մի մարմին, «որ գործելու է իբրև Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն և որի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը և բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը և համերաշխությունը երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև»<sup>1</sup>:

Նախապատրաստական աշխատանքներից հետո, 1917թ. դեկտեմբերին, Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքն ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»<sup>2</sup>: Այդ մարմինը հետագայում անվանվեց Միջկուսակցական բյուրո: Այն օժտված էր օրենսդիր և գործադիր գործառնություններով:

1918թ. հունիսի 17-ից Ղարաբաղում իշխանության բարձրագույն մարմնի դերը իրեն վերապահեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»-ը<sup>3</sup>:

Երկրի ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերը լուծելու նպատակով՝ որոշվեց իրավիճել Ղարաբաղի հայության առաջին համագումարը:

Համագումարը (1918թ. հուլիսի 22-26-ը) միաձայն որոշում է Ղարաբաղը ճանաչել որպես Արարատյան հանրապետության /այսինքն ՀՀ-ի- Վ.Բ./ մաս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակում Ղարաբաղը կտրված է ՀՀ-ից, որոշվեց ստեղծել Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն, որը պիտի ունենար երկիրը կառավարելու բոլոր իրավունքները:

Բերված փաստերը վկայում են, որ դեպքերի զարգացման արդյունքում, 1918թ. հուլիսին, ի դեմս Լեռնային Ղարաբաղի, Անդրկովկասում գծծում էր չորրորդ սուվերեն հանրապետությունը: Այն ուներ պետությամբ հատուկ բոլոր ինստիտուտները՝ օրենսդիր մարմին, գործադիր դատական իշխանություն, բանակ, մայրաքաղաք:

Այդ օրերին «Մշակը» գրել է. «արցախահայությունը հռչակեց իր «անկախության իրավունքը»<sup>4</sup>: Նորաստեղծ պետության սահմաններն սկսում էին Գանձակի մատույցներից և հասնում մինչև Արաքսի ափերը: Ըստ էության՝ Արցախի իշխանությունների իրավասության տակ մտնում էին Խամսայի մեխիբությունների տարածքները:

1920թ. ապրիլին Ադրբեջանում նոր կարգեր հաստատվելուց հետո անսահման հնարավորություն ստեղծվեց խորհրդայնացման բոլոր տակ, առանց մի կրակոցի, տիրել Լեռնային Ղարաբաղին, Ջանգեզուրին և Նախիջևանին:

<sup>1</sup> Հ.Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920թթ.), Երևան, 2008, էջ 51:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 50, 52:

<sup>3</sup> «Հայրենիք», թիվ 11, 1933, էջ 85:

<sup>4</sup> «Մշակ» 23 փետրվարի, թիվ 42, 1919:

Ի սկզբանե բոլշևիկյան Ռուսաստանի կառավարությունը միանշանակ ձգտում էր Նախիջևանը, Ջանգեզուրը և Ղարաբաղը տեսնել Ադրբեջանի գերիշխանության տակ: Այս կամ այն պետական գործչի հայամետ կամ ադրբեջանամետ գործունեությունը դեռևս տվյալ երկրի արտաքին քաղաքականության կողմնորոշիչ չի ենթադրում: Հետևաբար, 1920-ական թվականների հայության տարածքային կորուստները փորձել կապել Ստալինի անվան հետ, որը տեղ է գտել մեր պատմագիտության մեջ, շեղում է երևույթի բուն պատճառը բացահայտելու և, մանավանդ, մեզ մղում սխալ քաղաքական դիրքորոշման:

Բոլշևիկյան Ռուսաստանի կառավարությունը, խոսքով մերժելով ցարական արքունիքի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականությունը, իրականում այն շարունակեց՝ այս անգամ այդ ամենը քողարկելով բարձրակոչ հումանիստական կարգախոսներով:

Ինչպես մուսավաթական, այնպես էլ բոլշևիկյան Ադրբեջանի պարագլուխներին սարսափեցնում էր արցախահայության պետականության գոյության փաստը: Նրանք գիտակցում էին, որ հայոց երկու պետությունները, և, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղը, նախ և առաջ հնարավորություն չեն տա տարածաշրջանում արհեստականորեն ձևավորել թուրքական երկրորդ պետությունը և երկրորդ՝ ապագայում անվերադարձ կթաղվի երկու թուրքական երկրների միավորման պանթուրքիստական ծրագիրը:

Փաստորեն, երեք կողմերի համար էլ դա շահեկան էր. Ադրբեջանի թուրքերը ձեռք բերեցին որոշակի անկախություն և հիմնականում հայկական տարածքների վրա ունեցան պետություն, քեմալական թուրքերը շարունակեցին ստանալ խորհրդային Ռուսաստանի աջակցությունը՝ տեր դառնալով հայոց երկրի մեծ մասին, իսկ բոլշևիկները, իջնելով հարավ, տիրելով մերձկասպյան շրջաններին, փայլուն հնարավորություն ստացան արևելքում տարածելու սոցիալիստական հեղափոխությունը:

Չնայած թուրքականությունը ժամանակի ընթացքում այլակերպվել է, բայց և այնպես Արցախի և Ջանգեզուրի հարցը 20-րդ դարի սկզբներից առայսօր, այդ գաղափարաբանության հետնախորշում, մշտավառ է պահվում, և այն իրենց ձևով լուծելու ամեն օր տակտիկ միջնաժամկետ ծրագրեր են որոնում:

Քաղաքական ուժերից բացի, ժողովրդի հոգսերով ապրող և Արցախի ապագայի համար մտահոգ, ազգային կերպ ունեցող մտավորականությունը խորհրդայնացման առաջին իսկ օրերից նույնպես հասկացավ, որ նոր կարգերը ազատություն չբերեցին արցախահայությանը: Նրանք միջոցներ էին որոնում Արցախը փրկելու վերահաս վտանգից:

Արխիվներում պահպանվող խորհրդային ժամանակաշրջանից մնացած փաստաթղթերում նրանց հազար ու մի պիտակներ են կայցրել՝ անվանելով շովունիստներ, նացիոնալիստներ, ժողովրդի թշնամիներ<sup>1</sup>:

Խորհրդային ուժերն ամենադաժան մեթոդներով հաշվեհարդար էին տեսնում հայրենասեր գործիչների հետ:

*Չորրորդ գլուխը՝ «ԼՂԻՄ-ը խորհրդային իրավակարգի և կոմունիստական գաղափարաբանության հողովույթում որպես արցախահայ պետականության արտահայտության ձև» բաղկացած է չորս ենթագլուխներից՝ ա) ԼՂԻՄ կազմավորման գործընթացը, բ) ԼՂԻՄ կարգավիճակը խորհրդային միության վարչաքաղաքական համակարգում, գ) Խորհրդային Ադրբեջանի գաղութային*

<sup>1</sup> ԼՂՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 13, գ. 1, թ. 2:

քաղաքականությունը և դրա հետևանքները, դ) Արցախահայության պայքարը ԼՂԻՄ-ը ՀԻՍՄ-ին վերամիավորելու համար (1923-1988թթ.):

Ադրբեջանի ղեկավարությունը, կենտրոնի աջակցությամբ, լուծելով իր հիմնական խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը, այս անգամ արդեն լայն քարոզչություն սկսեց՝ արցախահայությանը զրկելու ազատ ապրելու վերջին հնարավորությունից: 1921թ. սեպտեմբերի 26-ին Ադրկոմկուսի Քաղբյուրոն և Կազմբյուրոն որոշում են. կապված Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հետ՝ խնդրել Կոմբյուրոյին՝ վերամայելու իր որոշումը<sup>1</sup>:

1923թ. մայիսի 27-ին Ստալինին, Տրոցկուն և Ռադեկին հասցեագրած մի ցանկուն Նարիմանովը գրել է. «Լեռնային Ղարաբաղը Սիրզոյանի ուժգին ճնշման տակ հայտարարված է ինքնավար մարզ: Իմ ներկայությամբ (այդ ժամանակ նա աշխատում էր Մոսկվայում-Վ.Բ.) դա չէր հաջողվում...: Սիրզոյանն այդ ընթացքում դաշնակ ուսուցիչների օգնությամբ հող է պատրաստել և հարցն անց է կացրել Անդրերկրկումում: Հետո էլ դնում են Գանձակի Լեռնային մասի հարցը ևս»<sup>2</sup>:

Ադրբեջանի ղեկավարության նման դիրքորոշման դեմ բազմաթիվ բողոքներ են ուղարկվում Թիֆլիս, Մոսկվա և Երևան: Անդրերկրկումը կրկին ու կրկին անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի հարցին: Անդրերկրկումի Կենտկոմի 1923թ. հունիսի 27-ին տեղի ունեցած պլենումը, լսելով Շադունցի և Կարակոզովի զեկուցումները, պահանջում է մեկ ամսվա ընթացքում լուծել Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցը<sup>3</sup>:

1923թ. հուլիսի 1-ին Ադրկոմկուսի կենտկոմի նախագահությունը, այլ ելք չունենալով, Կենտգործկոմին համձնարարում է հռչակել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ Խանքենդի կենտրոնով, միաժամանակ ընտրել գործադիր կոմիտե<sup>4</sup>:

Շուտով ճշտվեցին մարզի սահմանները:

Այսպիսով, նորաստեղծ ԼՂԻՄ-ի կազմում ընդգրկվեցին 212 բնակավայրեր, որոնցից՝ 185 հայաբնակ, 21 թուրքաբնակ, 5 ռուսաբնակ և 1 հունաբնակ: Երկրամասում կար խառը բնակչություն ունեցող մեկ քաղաք:

Ադրբեջանի իշխանությունները նորաստեղծ մարզի կազմում չընդգրկեցին հայկական տարածքների զգալի մասը, մասնավորապես Շահումյանի, Խանլարի, Ղաչքեսանի և Շամխորի շրջանները՝ շուրջ 107 հայկական գյուղերով:

Չնայած այդ ամենին, Հյուսիսային Արցախի հայության համար մինչև 1990թ. վերջնական հայաթափումը, ԼՂԻՄ-ը և նրա կենտրոն Ստեփանակերտը դիտվում էին որպես նախորդ ժամանակներից մնացած հայրենի պետություն և հույսի վերջին բեկոր:

Վերոհիշյալ շրջանները ԼՂԻՄ կազմում չընդգրկելը հիմնավորելու, ինչպես նաև այդ տարածքների հայության դժգոհությունները և բողոքները վերադաս մարմիններում մարելու և չընթացքավորելու համար խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը 1923թ. հուլիսից շջանառության մեջ դրեց այն գաղափարը, որ ԼՂԻՄ-ը ձևավորվել է Լեռնային Ղարաբաղի տոսկ հայկական մասում: Նմանօրինակ «հիմնավորումը» տասնամյակներ շարունակ Ադրբեջանի պաշտոնական և գիտական շրջանակներին հնարավորություն է տվել իրականությունը նենգափոխելու միջոցով համաշխարհային հանրությանն ապակողմնորոշել՝

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925, с. 97.

<sup>2</sup> „Азербайджан“, 5 ноября, 1989;

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 12, թ. 3:

<sup>4</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925, с. 149-150.

ներկայացնելով, թե իբր Հյուսիսային Արցախի շրջաններն ի սկզբանե հայկական չեն եղել, իսկ տեղի քրիստոնեական հուշարձաններն էլ աղվանական ծագում ունեն: Ամենայն հավանականությամբ այս հանգամանքը, ինչու չէ, նաև հայկական դիվանագիտության ճապաղ դիրքորոշումը նպաստում են, որպեսզի այսօր Հյուսիսային Արցախի շրջանների և հատկապես Շահումյանի հարցը դուրս մնա բանակցային գործընթացից:

ԼՂԻՄ կազմավորումից հետո Լեռնային Ղարաբաղ հասկացությամբ այլևս չէին բնութագրվում Հյուսիսային Արցախի հայկական մյուս շրջանները: Ցավոք, այդ թյուր մտայնությունը ժամանակի ընթացքում կարծրացավ նաև հայկական միջավայրում: Ադրբեջանի ղեկավարությունը, դրանով չբավարարվելով, հայկական երկու տարածքների հնարավոր միավորումը կանխելու հեռահար նպատակով Ղարաբաղի Լեռնային շրջանի արևմտյան մասը՝ Արաքսի ափից մինչև Փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերը, կտրեցին ու ՀՆՍՄ-ի և ԼՂԻՄ-ի արանքում 1923թ. կազմակերպեցին բուֆերային «Կարմիր Քրոստան» ազգային օկրուգը:

Այսպիսով, մոսկովյան իշխանությունների աջակցությամբ և Թուրքիայի ամենագործուն մասնակցությամբ 1921թ. Հայաստանից շուրջ 17.600 քառ. կմ կտրվեց և բռնակցվեց խորհրդային Ադրբեջանին<sup>1</sup>:

Բուլշևիկ գործիչները խորքում, ըստ էության, շարունակելով ազգային փոքրամասնությունների նկատմամբ ցարական իշխանությունների քաղաքականությունը, այլ գործելաճ էին որդեգրել՝ ստեղծելով էթնիկ հիմքում հիմնականում միատարրություն պարունակող ինքնավար վարչատարածքային միավորներ՝ ենթադրելով, որ դա կմարի ազգամիջյան հակամարտությունները:

Բայց, քանի որ այդ բաժանումներն իրագործվում էին իշխանության վերին օղակներում գտնվող տարբեր խմբավորումների միջև սուր պայքարի պայմաններում, ուստի այդ ամենը կամայական վերաձևումների տեսք են ստանում՝ պայքարի հող նախապատրաստելով հետագայում ազգամիջյան լարվածության և հակամարտությունների համար:

Խորհրդային 70 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայությունը, ՀՆՍՄ-ից կտրված, ԽՍՀՄ կազմում ապրեց ներքին ինքնավար կյանքով՝ խոր հավատով, որ պայքարի արդյունքում կվերականգնի լիակատար անկախությունը:

ԼՂԻՄ-ը ԽՍՀՄ ինքնավար մարզ է եղել, որը միջնորդավորված ենթակայություն է ունեցել միութենական իշխանություններին, այսինքն վարչական կառավարման է ենթարկվել ԽՍՀՄ մեկ այլ վարչատարածքային միավորի միջոցով:

Բազում դարերի ընթացքում արցախահայությունն, իր մեջ ամբարելով զավթիչների դեմ պայքարի հնարամտություն և կամք, այս անգամ էլ, թեկուզև մասնատված և ջլատված, կարողացավ պահպանել կիսանկախ վիճակն ու ինքնությունը:

Սահմանադրութան առաջին գլխի երկրորդ հոդվածում նշված է. «բոլոր գործավարությունը, դատավարությունը և ոսուցումը դպրոցներում Ինքնավար Լեռնային Ղարաբաղում կատարվում է մայրենի լեզվով»<sup>2</sup>:

Ներկա ԼՂԻՄ սահմանադրության, իսկ 1924թ. նոյեմբերի 26-ից կանոնարարության, հոդվածներից նկատելի է, ինչպես ԼՂԻՄ-ը, այնպես էլ ԱԽՍՄ-ն ԽՍՀՄ կազմում ունեին ներքին ինքնավար կարգավիճակ: Ուստի, եթե Ադրբեջանի

<sup>1</sup> Ա.Աբեղյան, Մենք և մեր հարևանները, «Հայրենիք», հմ. 4, 1928, էջ 102: Ի դեպ նկատենք, որ ադրբեջանցի հեղինակները այս փաստը նույնպես նկատել են, գտնելով, որ Լեռնային Ղարաբաղից 15.996,9 քառ.կմ կտրվել և տրվել է խորհրդային Ադրբեջանին: Տե՛ս՝ Mahmudov Y.M., Sükröov K.K., Qarabag, Real tarix faktlar, Sənədlər, Bakı, 2005, c. 68.

<sup>2</sup> «Կոմունիստ», 6 հուլիսի, 1924:

թրքությունն իրեն իրավունք է վերապահում ստեղծելու իր ազգային պետությունը, ապա այդ նույնից իրավասու է օգտվելու ԼԴԻՄ հայությունը:

ԼԴԻՄ կանոնադրության առաջին գլխի երկրորդ հոդվածում ասված էր. «ԽՍՀՄ, ԱՆՖՍՀ և ԱՄՍՀ օրենսդրական ակտերը ԼԴԻՄ տարածքում պարտադիր կիրարկելի են»<sup>1</sup>:

Ի դեպ, նկատենք, որ ԼԴԻՄ-ի համար, որպես միջնորդ սուբյեկտ, հանդես է գալիս ոչ միայն Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունը, այլ նաև Անդրկովկասի խորհրդային ֆեդերատիվ հանրապետությունը, որի կազմում էր գտնվում նաև ՀԽՍՀ-ն:

Չնայած Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ ձգտում էին ԼԴԻՄ-ի հետ կապված փաստաթղթերում չօգտագործել երկրամասի ազգային կերպը բնորոշող հայկական անվանումը, այնուամենայնիվ, 1929թ. ընդունված նոր կանոնադրության մեջ դա ավելի քան ակնառու էր: Նոր կանոնադրության առաջին գլխի մեջ ասված էր, որ երկրամասը «...իր ազգային կազմի հատկանիշներով կազմավորվում է որպես առանձին միավոր»<sup>2</sup>:

Այս փաստերի ճնշման տակ հետխորհրդային շրջանի Ադրբեջանական պատմագրությունը գտնում է, որ, հանձին ՀԽՍՀ-ի և ԼԴԻՄ-ի, ԽՍՀՄ կազմում հայությունն ուներ երկու պետականություն<sup>3</sup>:

Չնայած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակին, խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, օգտվելով միութենական կենտրոնական իշխանությունների հովանավորությունից, ԼԴԻՄ կազմավորման հենց սկզբից կոպտորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Դա արտահայտվել է երկրամասի հայրենասեր ղեկավարներին և մտավորականներին հալածելու, «հայկական մացիոնալիստական, հակախորհրդային խմբեր» հայտնաբերելուն և դրանց հետ հաշվեհարդար տեսնելու, արտագնա աշխատանքի պատրվակով հայ երիտասարդությանը հայրենիքից դուրս մղելու, հայկական բնակավայրերը վերացնելու և ադրբեջանական գյուղեր հիմնելու, մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼԴԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցորդը դարձնելու, Լեռնային Ղարաբաղի և իր իսկ միութենական հանրապետության միջև արտադրանքի ոչ համարժեք փոխանակում իրականացնելու, հայազգի բնակչության նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու, Արցախին հարող հայկական շրջանների վարչատարածքային կառուցվածքը մասնակիորեն վերափոխելու, հայոց լեզուն և մշակույթը սահմանափակելու, հայկական հուշարձաններն ու մշակութային արժեքները ոչնչացնելու և դրանք յուրացնելու փորձերի մեջ:

Մարզն Ադրբեջանի գերիշխանությունից ազատագրելու և մայր հայրենիքին վերամիավորելու համար ադրբեջանական պաշտոնյաների դեմ Արցախի գավառներում անընդհատ եղել են ընդվզումներ ու ապստամբական պոռթկումներ:

1920-ական թվականների սկզբներին արցախահայության ազատագրական պայքարը համակարգում էր 1921թ. Թավրիզում ստեղծված «Ղարաբաղի ազատագրման» միությունը:

1925-27թթ., Լեռնային Ղարաբաղում ապստամբական շարժումները կանխելու նպատակով, Ստեփանակերտում, Շուշիում և շրջկենտրոններում մասսայական խուզարկություններ և ձերբակալումներ են կատարվում: Բռնի ուժով հայ գյուղացիության շրջանում եղած զենքը և զինամթերքը բռնագրավվում էր: Նրանք բացահայտ քարոզում էին ԼԴԻՄ-ը խորհրդային Հայաստանին

<sup>1</sup> ԼԴՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1, թ. 16:

<sup>2</sup> ԼԴՀ պետարխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 354, թ. 5:

<sup>3</sup> www.isr-az.com/100331140534.pdf

վերամիավորելու գաղափարը: Բաքվից ստացված հրահանգներով նրանց մեծ մասին արտաքսել են Արցախից<sup>1</sup>:

1920-ական թվականների կեսերին Արցախում, հակաադրբեջանական շարժումը ղեկավարելու նպատակով, ստեղծվել է «Ղարաբաղը Հայաստանին» միությունը<sup>2</sup>: Այն իր բջիջներն ուներ ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Գանձակի հայկական շրջաններում: 1927թ. նոյեմբերի սկզբներին միությունը հազարավոր թռուցիկներ է ցրել «Ղարաբաղը Հայաստանին» նշանաբանով:

1930-ական թվականների երկրորդ կեսին Սիր Զաֆար Բաղիրովը ԼՂԻՄ-ում կադրային ջարդ կազմակերպեց: 1931թ. մարզկոմի ղեկավարությանը մեղադրեց նացիոնալիզմի, նացիոնալ-ուկրոնիզմի, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու փորձերի և դաշնակցական գաղափարների դեմ չպայքարելու մեջ<sup>3</sup>:

Նրա հրահանգով 1937թ. մարտ, ապրիլ ամիսներին Ստեփանակերտում «բացահայտվեց», այսպես կոչված, նացիոնալիստական հակախորհրդային խմբավորում:

Սիր Զաֆար Բաղիրովի կողմից շրջանառության մեջ դրվեց «Ադրբեջանի անբաժանելի մաս հանդիսացող Լեռնային Ղարաբաղ» արտահայտությունը: Դա առաջօր օգտագործվում է Ադրբեջանի տարբեր տրամաչափի պաշտոնյաների կողմից:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված բարոյահոգեբանական, սոցիալ-տնտեսական, մշակութային, ինչպես նաև քաղաքական ծանր իրավիճակից արցախահայությանը փրկելու, ինչպես նաև պատմական արդարությունը վերականգնելու համար խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, և մանավանդ, մտավորականությունը բազմիցս դիմել են կենտրոնական իշխանություններին:

ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու նպատակով ծավալվող ընդհատակյա պայքարն օրեցօր մեծ թափ էր ստանում:

1962թ. Ստեփանակերտի ավտոշարասյան 300 աշխատակիցներ բողոք-նամակ գրեցին ԽՍՀՄ ղեկավարությանը: Նրանք խնդրեցին միջոցներ ձեռնարկել ԼՂԻՄ-ը վերամիավորելու ՀԽՍՀ-ին:

1965թ. հունիսի սկզբին ԼՂԻՄ-ի 13 ղեկավար աշխատողներ և մտավորականներ առավել փանգամաակից նամակ հղեցին ԽՍՀՄ կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ու Մինիստրների խորհրդի ղեկավարությանը:

1965թ. դեկտեմբերի կեսերին ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջով, 45 ստորագրությամբ, ԽՍՀՄ ղեկավարությանը մարզից նոր նամակ ուղարկեցին:

Չնայած այս նամակներն այդ պահին խորհրդային ամբողջատիրության պայմաններում ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցում որևէ գործնական ընթացք չապահովեցին, այնուամենայնիվ, անհետևանք չմնացին:

ԼՂԻՄ մտավորականության համարձակ քայլերը ա) գաղափարական թարմ լիցք հաղորդեցին արցախյան շարժմանը, բ) ժողովրդական նոր զանգվածներ ներգրավեցին ազատագրական պայքարի հորձանուտները, գ) հայրենի երկրի ճակատագրի նկատմամբ մատաղ սերնդի մեջ պատասխանատվության մեծ զգացում ներարկեցին, դ) ՀԽՍՀ մտավորականության և ղեկավարության հետագա գործողությունների համար վստահելի և պարարտ հենք մտախապտարաստեցին:

Ջերթական քայլը չուշացավ:

<sup>1</sup> Հալածանքները Ղարաբաղում 1927թ., «Դրոշակ», թիվ 12, 1927; Ա.Արծրունի, Հակառակորդի բանակում, «Դրոշակ», թիվ 10, 1928, էջ 251:

<sup>2</sup> Ա.Արեւյան, Մենք և մեր հարևանները, «Հայրենիք», թիվ 1, 1928, էջ 139:

<sup>3</sup> «Заря Востока», 24 мая, 1931.

1966-1971թթ. երևանաբնակ մտավորականների, այդ թվում Մ.Սարյանը, Պ.Սևակը, Յ.Սահյանը, Ե.Քոչարը նամակներ հղեցին ՅԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարությանը

1965-68թթ. ազգամիջյան ընդհարումների, ժողովրդական հուզումների և բողոքների ճնշման ընթացքում 50 հայեր ազատագրվեցին: Նրանցից 20 հոգի գնդակահարվեցին կամ էլ այս կամ այն ձևով սպանվեցին բանտերում և արքորավայրերում: 10 մարդ անհայտ կորավ, ավելի քան 150 հոգի բռնատեղահանվեց: Շարունակվող հետապնդումների պատճառով 100 ընտանիք հեռացավ Լեռնային Ղարաբաղից<sup>1</sup>:

Չնայած այդ ամենին, շարժումն ապրեց և ծավալվեց արդեն հայ ժողովրդի ընդերքում՝ հիմք դնելով նոր խմորումների:

1976թ. ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման ժամանակ նորից արծարծվեց արցախյան հիմնահարցը: Հայության համար ցավոտ այս կնճիռը իշխանության տարբեր թևերի քննության առարկան դարձավ:

Խորհրդային Ադրբեջանի բռնատիրության պայմաններում մարզի մտավորականության շրջանում անթեղված մնում էին ազատագրական պայքարի կայծերը, որոնք բռնկվեցին ԽՍՀՄ-ում վերակառուցման ուղղության որդեգրումից ի վեր:

*Հինգերորդ գլուխը* «Ազգային-ազատագրական պայքարը արցախահայության պետականության վերականգնման համար», բաղկացած է երկու ենթագլուխներից՝ ա) Արցախահայության ազգային ազատագրական պայքարը: ԼՂՀ հռչակումը, բ) ԼՂՀ կայացման գործընթացը (1991թ. դեկտեմբեր-2006թ. դեկտեմբեր):

Ազատագրական պայքարի գործնական ընթացք ապահովելու նպատակով 1986թ. ապրիլից Ստեփանակերտում սկսեց գործել «Արցախյան միություն» կազմակերպությունը<sup>2</sup>:

Ապագայում տեսանելի և անտեսանելի խութերն ավելի սահուն հաղթահարելու նպատակով արցախյան շարժման ղեկավարներն ի սկզբանե ազգային-ազատագրական պայքարը փորձում էին տանել ժողովրդավարական սկզբունքների և իրավական նորմերի շրջանակներում: Դրա առաջին արտահայտությունը դարձավ 1987թ. վերջերին կազմակերպված յուրօրինակ հանրաքվե: ՅԽՍՀ-ի հետ վերամիավորման օգտին 80 հազար մարդ «այո» ասաց:

Փետրվարի 13-ին շարժման ակտիվիստները Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոսների և ուսանողների հետ ցույց կազմակերպեցին: Ըստ էության, այդ ցույցն ինքնաբուխ էր: Այդ օրվանից շարժումը համաժողովրդական և աննահանջ պայքարի բնույթ է ստանում:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը հայկական երկրամասը ՅԽՍՀ վերամիավորման մասին պատմական որոշում կայացրեց:

Ժողովուրդն ինքն ընտրեց շարժման ղեկավարներին:

1988թ. մարտի 1-ին ստեղծվեց «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամ կոմիտեն<sup>3</sup>:

1988թ. փետրվարի 23-ին Հենրիկ Պողոսյանը, Բորիս Կորկովի փոխարեն ընտրվելով մարզկոմի առաջին քարտուղար, ԼՂԻՄ կուսակցական մարմինը՝ բյուրոն, նույնպես ներգրավեց շարժման մեջ:

<sup>1</sup> Ն.Սարումյան, մշվ. աշխ., էջ 93 և 95:

<sup>2</sup> Վ.Բալայան, Ռ.Բալայան, Մ.Հարությունյան, Անկախության նվիրյալները, Երևան, 2009, էջ 6:

<sup>3</sup> Ուսերեն՝ Крунк-Комитет революционного управления Нагорного Карабаха – Լեռնային Ղարաբաղի հեղափոխական կառավարման կոմիտե:

Եվ այսպես, ԼԴԻՄ-ում ի սկզբանե շարժումը համաժողովրդական բնույթ ստացավ: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սահմանադրական պահանջներին հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը:

Ոգևորվելով կենտրոնական իշխանությունների թողտվությունից՝ Ադրբեջանի ղեկավարությունը սունգայիթյան եղեռնագործությունից հետո Բաքվից, Կիրովաբադից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից և հայաշատ այլ վայրերից 1988թ. կեսերից կազմակերպեց հայերի բռնագաղթ:

Չաշվի առնելով ստեղծված բարդ իրադրությունը՝ 1989թ. հունվարի 20-ին ԼԴԻՄ-ում, ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ, ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե, որը գլխավորում էր ԽՍԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա.Վոլսկին<sup>1</sup>:

Սակայն ԼԴԻՄ հատուկ կառավարման կոմիտեն, իրավական անորոշ կարգավիճակով, ինչպես նաև կենտրոնի կողմից Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի անբաժանելի հատված ճանաչելու փաստն անպտուղ դարձրին կոմիտեի գործունեությունը:

Ինքնավար մարզի հայ բնակչության համար այդ ժամը վիճակում նրա բախտը տնօրինելու նպատակով 1989թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ:

Պատժիչ բռնամիջոցները հատկապես ուժեղացան Շահումյանի շրջանում: Վերահաս լայնածավալ բռնարարքներին դիմակայելու նպատակով 1989թ. հուլիսի 26-ին ժողովրդական պատգամավորների շրջխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց շրջանը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմի մեջ մտցնելու մասին<sup>2</sup>:

Չուսահատության հասած արցախահայությունը, օտարների հովանավորության պատրանքը թոթափելով, իր սեփական բախտը կռելու վճռականությամբ՝ զենքի դիմեց: Ինքնապաշտպանության մղումով ստեղծվեցին հայ աշխարհագրայինների առաջին խմբերն ու ջոկատները, որոնք Շահումյանում, Գետաշենում և Լեռնային Ղարաբաղում արժանի հակահարված տվեցին թշնամուն:

Ստեղծված անորոշության պայմաններում, ապագա արհավիրքներին դիմագրավելու, բնակչության անվտանգությունն ապահովելու, Արցախի ճակատագիրը կանխորոշելու համար շարժման ղեկավարները պահի առումով ճիշտ ու հստակ որոշում կայացրին:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Չռչակագիր Լեռնային Ղարաբաղի Չանրապետության հռչակման մասին»<sup>3</sup>:

Առաջին հերթին անհրաժեշտ էր ձևավորել բարձրագույն օրենսդիր մարմինը՝ ԼՂՀ Գերագույն խորհուրդը:

1991թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ առաջին ընտրությունները: ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց Ա.Մկրտչյանը:

Այնուհետև ձևավորվեց գործադիր իշխանությունը:

Չնայած Գերագույն խորհրդի պատգամավորները մեծամասնությամբ ՀՀ-ի անդամներ էին, ԼՂՀ-ում գործող բոլոր քաղաքական ուժերը մեկտեղելու, թշնամու դեմ համաժողովրդական ճակատ հարդարելու և ՀՀ ՀՀՇ-ական իշխանությունների հետ կանոնավոր հարաբերություններ ստեղծելու նպատակով մի շարք պաշտոններ,

<sup>1</sup> «Սովետական Ղարաբաղ», 15 հունվարի, 1989:

<sup>2</sup> «Գրական թերթ», 25 օգոստոսի, 1989:

<sup>3</sup> «Հայաստանի հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:



այդ թվում՝ վարչապետի, հանձնվեցին հանրապետությունում գործող այլ կուսակցությունների ներկայացուցիչներին:

Ստեղծվեցին ԼՂՀ Գերագույն դատարանը և Գլխավոր դատախազությունը: Ընդունվեց ԼՂՀ դրոշը, օրհներգն ու զինանշանը:

Այդ օրերին զինված ընդհարումներն առավել հաճախակի էին դառնում: Եշմարելի էր մեծամասշտաբ պատերազմի ուրվականը:

Ձևավորվեց ազգային բանակ: Իսկ 1991թ. օգոստոսի 15-ից իր գործունեությունը սկսեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն (ՊՊԿ), որը գլխավորեց Ռոբերտ Քոչարյանը: ԼՂՀ հայության համար սկսվեց հայրենական պատերազմ, որը 1994թ. մայիսին հաղթական ավարտ ունեցավ:

Չետպատերազմյան շրջանում ԼՂՀ ազգաբնակչությունն իր ջանքերն առավել շատ նպատակաուղղեց երկրի ներքին կյանքը կարգավորելուն՝ փորձելով այդ ճանապարհով ինտեգրվել միջազգային հանրությանը:

Երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականին:

Տարեցտարի կատարելագործվում էր տեղական ինքնակառավարման համակարգը: 1995թ. որոշվեց ԼՂՀ Գերագույն խորհուրդը վերանվանել Ազգային ժողով: Մշտական գործող խորհրդարան ունենալու նպատակով պատգամավորների թիվը կրճատվեց և հասցվեց 33-ի:

ԼՂՀ իշխանությունները գիտակցում էին, որ տնտեսական կյանքի վերափոխությունը, սոցիալական խնդիրների արդյունավետ լուծումն ուղղակիորեն կապված են երկրի քաղաքական հզորացման և անկախության ամրապնդման հետ: Անցումը շուկայական հարաբերություններին՝ ԼՂՀ-ում իրականացվում էր ընթացող ռազմական գործողությունների, տնտեսական ճգնաժամի սրման, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման պայմաններում:

1994-2007 թվականներին երկրում իրականացվեց սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի լայնածավալ բարեփոխումներ: Երկրում բարեփոխումները երբեմն ընթանում էին բարձրաստիճան որոշ պաշտոնյաների և քաղաքական ուժերի անհամաձայնության և հակամարտության պայմաններում: ԼՂՀ նախագահի և պաշտպանության նախարարի միջև, 1998թ. կեսերից սկսած, հակասությունները վերափոխվեցին քաղաքական ճգնաժամի: Շուտով այն հաղթահարվեց:

Քայլ առ քայլ կյանքի կոչվեցին ժողովրդավարական սկզբունքները: Հասարակության մեջ վերացավ վախի, անվստահության մթնոլորտը:

Այդ ճանապարհին ամենաճանրակշիռ ձեռքբերումը 2006թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ սահմանադրության ընդունումն էր:

### **ՇՁՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. 17-րդ դարի վերջերին, հայ իրականության մեջ համատարած կորուստների և հուսահատության պայմաններում, Արցախի մելիքական տների ներկայացուցիչները և Գանձասարի կաթողիկոսները, որպես հայկական կորուսյալ պետականության լավագույն ավանդույթների կրողներ, նոր էջ բացեցին հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Նրանք 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին մշակեցին հայ ժողովրդի ազատագրության ռազմավարությունը, որը ենթադրում էր, սեփական ներուժին ապավինելով, Ռուսաստանի աջակցությամբ, վերականգնել հայկական թագավորությունը: Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հայ իրականության մեջ առաջինն ուրվագծեց ռուսական կողմնորոշման նախաշաղկիղը, որին նոր քաղաքական ընթացք հաղորդեցին Իսրայել Օրին և Արցախի մելիքները:

Ձինված պայքարի միջոցով ոչ միայն հայության ինքնության փրկման, այլև ազատության նվաճման և պետականության վերակերտման գաղափարի հայտնաբերումը հայության համար նոր արժեհամակարգի ստեղծման ելակետ

դարձավ: Արցախի գործիչների համար անընդունելի էր միայն աղերսագրերի միջոցով, «բարեկամ» երկրների աջակցությամբ հայրենիքի ազատագրման՝ մինչ այդ բյուրեղացած կարծրատիպը:

Արցախի ռազմաքաղաքական անվտանգության պահպանումը, ինքնիշխանության վերականգնման անհրաժեշտությունը երկրամասի հոգևոր ու աշխարհիկ տերերի մեջ ձևավորեց այն գիտակցությունը, թե հնարավոր չէ ապահովել հայկական տարանջատ գոյությունն ու զարգացումը, եթե իրենք չմիավորվեն և չգործեն որպես մեկ ամբողջություն: Արցախահայ իրականության մեջ օրեցօր գերիշխող էր դառնում ողջ Հայաստանի քաղաքական ինքնորոշման՝ Հայոց թագավորության վերականգնման ձգտումը: Այդ առանցքի շուրջն էլ ծավալվեցին 18-րդ դարի և 19-րդ դարի սկզբների հայ իրականության կարևոր պատմական իրադարձությունները:

2. Հայ հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործին և նոր զարգացումներին իր ուղղորդիչ դերակատարումով, 1720-ական թվականներից սկսած, առանձնապես կարևորվում է Արցախի մելիքների և, մասնավորապես Գանձասարի կաթողիկոսության ազդեցությունը: Եթե համաժողովրդական շարժում կազմակերպելու նպատակով նախորդ ժամանակահատվածում նրանք հիմնականում բավարարվում էին ազգային ազատագրական գաղափարների տարածումով և կազմակերպական բնույթի հարցերի լուծումով, ապա 1720-ական թվականների սկզբներից այդ նույն ուժերը գործնականորեն ձեռնամուխ եղան զինված պայքարի միջոցով Արցախում հայոց պետականության վերականգնմանը: Իրագործվեց Եսայի Հասան-Ջալալյանի «Նոր նորոգման» տեսլականը:

3. 1730-ական թվականների սկզբներին ցարական արքունիքը, համաձայնության գալով շահի հետ, մի առ ժամանակ հետաձգելով տարածաշրջանային ծրագրերի իրագործումը, Այսրկովկասը թողեց Պարսկաստանի տիրապետության տակ: Արցախի մելիքները, հակաթուրքական ճակատ հարդարելու նպատակով, ստիպված սկսեցին համագործակցել Իրանի նոր տիրակալ Նադիրի հետ՝ ծնունդ տալով հայկական մի նոր ինքնավար միավորի՝ Խասնայի մելիքություններին: Արցախում սղնախների հիմքերի վրա ծնված վարչաքաղաքական նոր միավորը, որպես հայոց պետականության արտահայտության ձև, գոտեպնդելով լեռնաշխարհի զինավառ հայությանը, մոտակա տասնամյակներում դարձան հայ ազգային ազատագրական շարժման նոր օջախներ՝ ամրացնելով հավատը միասնության և հաղթանակի համար:

4. 18-րդ դարի երկրորդ կեսին Արցախում տեղի ունեցած քաղաքական նոր վերադասավորությունները՝ Ղարաբաղի խանության ասպարեզ գալը և դրա հետևանքով ստեղծված հայ հանրության ծանր, անտանելի վիճակն ու մելիքների իրավունքների սահմանափակումը պատճառ են դառնում ազգային ազատագրական պայքարի աննախադեպ վերելքին և հայկական թագավորության վերակերտման գաղափարի վերակենդանացմանը: Տարբեր երկրներում ապրող հայ հասարակական-քաղաքական գործիչները, ուշի ուշով հետևելով տարածաշրջանային զարգացումներին, Արցախը համարելով հայկական պետականության վերակերտման հնարավոր օջախ, փորձում էին ի մի բերել մելիքական ուժերը՝ նրանց մղելով գործնական քայլերի:

Պարսկական իշխանություններն ու Իբրահիմ խանը, հանձին Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսի, տեսնում էին դեպի Այսրկովկաս ռուսների մուտքն ապահովող ուժի, ուստի ամենադաժան և հետևողական ձևով փորձում էին վերացնել հայկական պետականության վերջին բեկորները:

5. Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի հաշտության պայմանագրով:

Այդ պայմանագիրը մեր ժողովրդի համար պատմական անանցանելի իրողություն է: Այն մի ավելորդ անգամ վկայում է, որ Ղարաբաղն առանձին ազգային-պետական միավորի կարգավիճակով է անցել Ռուսաստանի տիրապետության տակ: Հետևաբար, ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, այնպես էլ ԼՂԶ մաս հանդիսացող շրջանները Ռուսաստանին են անցել հավասար իրավասություններով կարգավիճակով: Ուրեմն, եթե խորհրդային կայսրության փլուզումից հետո վերոհիշյալ երկիրը իրեն իրավունք է վերապահում ստեղծել ազգային պետականություն, այդ նույնից օգտվում է նաև Ղարաբաղը: Գյուլիստանի պայմանագիրը կարող է քաղաքական ուղենիշ հանդիսանալ ԼՂԶ արտաքին քաղաքականության և դիվանագիտության սկզբունքների մշակման համար: Այն, բացի քաղաքական պատճառաբանություններից, ունի նաև իրավական ամբողջացված դաշտ՝ մեր օրերի թելադրած տեսակետի առումով: ԼՂԶ ճանաչման իրավական կողմի առաջնային քայլն անպայման պետք է կապել Գյուլիստանի պայմանագրի հետ:

Այստեղ Ադրբեջանը հանդես է գալիս որպես երկրորդական դեմք: Հիմնական կնճիղը Ղարաբաղ-Ռուսաստան կապի վրա է, որովհետև, կամա թե ակամա, Ռուսաստանն ինքը, եթե հիմա կանգնած է իր պետականության կայացման ճանապարհին և այն փորձում է իրականացնել քաղաքակիրթ չափանիշներով, չի կարող խուսափել իր պատմության իրավա-պայմանագրային հիմունքներից: Այսինքն հաշվի նստելով այդպիսի հիմունքներից մեկի՝ Գյուլիստանի պայմանագրի հետ, Ռուսաստանը պիտի կողմնորոշվի ստացած ժառանգության նկատմամբ: Իսկ պետաիրավական ժառանգությունը ոչ թե հպանցիկ երևոյթ է, այլ տվյալ տերության գոյության ընթացքում մշակված պետական շահերի ամբողջություն:

Ճիշտ է, մեկիքներին և Գանձասարի կաթողիկոսներին 19-րդ դարի սկզբներին չհաջողվեց վերակերտել պետականությունը, բայց, միևնույն ժամանակ, երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, Արցախի զարգացման և ազգային միատարրության պահպանման հեռանկարներ ուրվագծեց:

6. Ցարական տիրապետության մեկ դարն առլեցուն էր հասարակական կյանքի վերելքներով և վայրէջքներով: Ինչպես հայ ժողովրդի մի հատվածն, այնպես էլ՝ արցախահայությունն ազատագրվեց պարսկական դաժան տիրապետությունից՝ դարձնով իսկ խուսափելով իրեն սպառնացող ծուլման և ֆիզիկական բնաջնջման վտանգից: Երկրամասը տնտեսական ու մշակութային վերելք ապրեց: Դրան հակառակ, քաղաքական ասպարեզում կորուստները նույնպես շոշափելի էին: Ցարական կառավարության մեկիքական տների և Գանձասարի կաթողիկոսական աթոռի վերացման քաղաքականությունը կործանարար հետևանքներ ունեցավ: Արցախահայությունը ոչ միայն կորցրեց պետականության վերակերտման հնարավորությունը, այլև գրկվեց ուղղորդող ուժերից: Ասպարեզից հեռացան երկրի և ժողովրդի հոգևերով ապրող ազնվականության ներկայացուցիչները: Անվերադարձ ոչնչացվեցին հարյուրամյակների ընթացքում քննություն բռնած պետական ինստիտուտները: Ազգային կառույցների բացակայության պայմաններում հայ մարդը քայլ առ քայլ դարձավ տնտեսական, սոցիալական առօրյա մանր կենցաղային իրավիճակների մեջ խճճված կայսրության քաղաքացի: Վտանգված էր ոչ միայն ապագայում պետականություն ունենալու հնարավորությունը, այլ նաև հայ մարդու ազգային դիմագիծը: Մեկիքական տների վերացման և նրանց վերջնականապես հայրենիքից կտրելու քաղաքականությունը 1920-30-ական թվականներին վերջնական ավարտին հասցրեց խորհրդային իշխանությունը:

7. 1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրի ստորագրումից մինչև 1917թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումը, ավելի քան մեկդարյա փնտրտուքներից հետո, արցախահայությունը գիտակցեց, որ ցարական ինքնակալության համար խորթ է ազգային պետականության, նույնիսկ

ինքնավարության ամեն մի ձգտում: Հայ ժողովուրդը, պատմական փորձի վերափնաստավորմամբ և քննարկվող ժամանակաշրջանի իրողությունների սթափ գնահատմամբ լիովին ընկալեց, որ անկախ ազգային պետությունը միայն կարող էր դառնալ իր լիիրավ, լիարյուն, ստեղծագործ կյանքի միակ երաշխավորը: Հայության, այդ թվում արցախահայության լավագույն զավակները՝ մտավորականները, հասարակական-քաղաքական գործիչները համոզվեցին, որ ազատությունը և անկախությունը հնարավոր է միայն նվաճել՝ ձեռք բերելով քրտինքի, արյան ու մաքառման միջոցով: Հեղափոխական պայքարի քուրալում իմաստնացած այդ գործիչները կարողացան արցախահայության բազում դարերի ընթացքում ազատագրական շարժումների և պետականաշինության ասպարեզում կուտակած հարուստ կենսափորձը համամարդկային արժեքներին համադրելով՝ գտնել այդ ամենի ռացիոնալ հատիկը, ըստ այդմ, չհեռանալով հայության քաղաքակրթական ավանդույթներից, դա տարածել արևմտահայ իրակաճության մեջ: Հայ ժողովուրդը հասկացավ, որ «հայկական հարցը» սոսկ միայն արևմտյան Հայաստանի հիմնախնդիրը չէ, այն ավելի ընդգրկուն աշխարհագրական սահմաններ ունի և վերաբերում է ողջ հայությանը: Ուստի այդ գերխնդիրը միայն ու միայն կարելի էր լուծել միասնականությամբ ու ողջ հայության գործուն մասնակցությամբ:

8. 20-րդ դարի սկզբներին, հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավումից և ազգամիջյան ընդհարումներից հետո, Արցախի հասարակական, քաղաքական կազմակերպությունները, հատկապես՝ ՀՅԴ-ն, հասկացան, որ ապագայում սպասվելիք արհավիրքներին դիմակայելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ունենալ ազգային կառույցներ: Երկարատև աշխատանքի և պայքարի արդյունքում ոչ միայն ձևավորվեցին այդ կառույցները, այլև 1917թ. դեկտեմբերին դրվեցին նոր պետականության հիմքերը: Փաստորեն, դեռևս մինչև Ադրբեջանի և ադրբեջանցիների՝ որպես էթնոքաղաքական հանրության ասպարեզ գալը, արցախահայությունը վերակերտել էր իր պետականությունը՝ դառնալով տարածաշրջանային գործոն: Մինչև 1920թ. մայիսը՝ խորհրդային կարգերի հաստատումը, Լեռնային Ղարաբաղի հայությունն ապրեց դժվարություններով առլեցուն, բայց՝ պետական կյանքով:

9. Զննարկելով 1917թ. նոյեմբերի 7-ից մինչև 1921թ. հուլիսի 5-ը ընկած ժամանակահատվածը՝ հայության և Հայաստանի նկատմամբ ՌԿ/ԲԿ Կենտրոնի վարած քաղաքականությունը՝ աներկբա կարելի է ասել, որ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին խորհրդային ժավալապաշտ կայսրության, տվյալ պարագայում՝ Լենինի և նրա շրջապատի՝ Արևելքի նկատմամբ ունեցած մոտեցումների տրամաբանական շղթայի բարձրակետը դարձավ: Բուլշևիկներն այդ գործելաճը որդեգրել էին նախորդ՝ ցարական իշխանությունից: Նպատակը մեկն էր. իր կազմում ունենալ բզկտված ու մասնատված Հայաստան՝ բացառելով հայկական պետականության դրսևորման ամեն մի ձևը:

Արցախն Ադրբեջանին բռնակցելուց հետո Նարիմանովը և նրա կողմնակիցները, հայկական երկրամասը վերջնական կլանելու և պանթուրքիստական ծրագրերն իրագործելու նպատակով, փորձում էին հայությանը զրկել ազգային իշխանության վերջին բեկորներից: Ազատագրական պայքարի արդյունքում, թեկուզև ջլատված, բայց և այնպես Արցախում հաջողվեց պահպանել ներքին ինքնավար կարգավիճակը, որն էլ բուլշևիկյան բռնատիրության և «ինտերնացիոնալիզմի» պայմաններում հայության ինքնությունը պահելու հիմնական երաշխիքը դարձավ:

10. ԽՍՀՄ-ն ունեցել է չորս ձևի վարչատարածքային միավորներ և անկախ նրանց ինքնավարության չափաբաժնից ու աստիճանակարգից՝ բոլորի վրա էլ տարածված է եղել ԽՍՀՄ ինքնիշխանությունը: ԼՂԴԻՄ-ը, ունենալով ինքնավար կարգավիճակ, գործող օրենսդրության համաձայն որոշ հարցերում մեկ այլ

միութենական հանրապետության միջոցով կենտրոնական իշխանությունների կողմից վարչական կառավարման է ենթարկվել: Պատահական չէ, որ ԼՂԻՄ-ը սահմանադրությամբ, հետագայում՝ կանոնադրությամբ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններով, գործող օրենքներով, հաստատված սահմաններով խորհրդային համակեցության իրավաբաղաբական համակարգում իր տեղն ու դերն ուներ:

11. Չնայած խորհրդային Ադրբեջանը սահրանքների և ուժի միջոցով 70 տարի շարունակ փորձում էր սահմանափակել հայկական ինքնավարության իրավասությունները, այնուամենայնիվ, երկրամասի հայությունը, համախմբվելով հայրենասեր ղեկավարության և մտավորականության շուրջ, կարողացավ դիմակայել Բաքվի իշխանությունների հայակործան քաղաքականությանը: Դեռ ավելին, խորհրդային ողջ ժամանակահատվածում հայկական ինքնավարության գոյության պայմաններում հիմնականում անաղարտ պահպանվեց հայ մարդու հոգեկերտվածքը: Երկրամասի հայությունը, չկորցնելով պատմական հիշողությունը, ուղղակի և անուղղակի ձևով նոր սերնդին փոխանցեց պետականության գաղափարը: Միաժամանակ, անդուլ աշխատանքի շնորհիվ նպաստավոր տնտեսական հիմք ստեղծվեց ազատագրական պատերազմում հաղթելու և նորօրյա ազգային պետություն կառուցելու համար:

12. Հյուսիսային Արցախը, ի տարբերություն ԼՂԻՄ-ի, որը չուներ ինքնավար կարգավիճակ, կարճ ժամանակամիջոցում դարձավ Ադրբեջանի հայակույլ քաղաքականության գոհը: Մի քանի տասնամյակների ընթացքում, հօգուտ ադրբեջանցիների, արագ փոխվեց այդ շրջանների ազգագրական դեմքը: ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հայկական բնակավայրերի և հայ քաղաքացիների համար դարձել էր հույսի յուրօրինակ կղզյակ և ոգևորության աղբյուր: Նրանց և, հատկապես, հյուսիսային Արցախի ազգաբնակչության համար Ստեփանակերտը ոչ պաշտոնական մայրաքաղաքի դերակատարություն ուներ: Ստեփանակերտի ուսումնական հաստատությունները և, հատկապես մանկավարժական ինստիտուտը տարածաշրջանի հայության համար կադրերի պատրաստման դարբնոց էին դարձել: ԼՂԻՄ-ի մշակութային գործիչների և գրողների հետևողական աշխատանքի շնորհիվ հյուսիսային Արցախի ազգաբնակչությունն անմասն չմնաց հայկական բառ ու բանից: Խորհրդային համակեցության դրվածքով և օրենքներով ապրող վարչական միավորը, արցախահայության կամքի ու համառության շնորհիվ, օրեցօր ազգային կերպարանք ստացավ՝ ձախողելով Ադրբեջանի և նրա հովանավորների հայասպան ծրագրերը:

13. Չնայած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակին՝ խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, օգտվելով միութենական կենտրոնական իշխանությունների հովանավորությունից, ԼՂԻՄ կազմավորման հենց սկզբից կոպտորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Նպատակաուղղված ժողովրդագրական քաղաքականության միջոցով՝ Ադրբեջանի իշխանությունները փորձում էին Նախիջևանի օրինակով մարզը լիովին հայաթափել և իրենց օգտին մեկընդմիջտ լուծել ղարաբաղյան հիմնահարցը:

14. Լեռնային Ղարաբաղը, խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց և ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո, արցախահայությունը 1923թ. մինչև 1988թ., խորհրդային ամբողջատիրության պայմաններում, հաղթահարելով տեսանելի և անտեսանելի բոլոր խութերը, անընդհատ պայքարեց իր ազատության, մայր Հայաստանին վերամիավորման և ազգային պետականության վերակերտման համար: Խորհրդային տարիներին արցախահայության վերեքներով ու վայրէջքներով ընթացող պայքարը 1988թ. փետրվարին սկսված համաժողովրդական ու համազգային ազատագրական շարժման հենքը հանդիսացավ:

15. Խորհրդային կայսրության կործանումը նպաստավոր պայմաններ ստեղծեց արցախահայության ազգային իղծերի իրագործման համար: Ազատագրական պայքարի հորձանուտում արցախահայությունը ոչ միայն ձեռք բերեց անկախություն, այլ նաև վերակերտեց իր ազգային պետականությունը: Հետևելով ԽՍՀՄ օրենսդրությամբ և միջազգային իրավունքի բոլոր նորմերին՝ ԼՂԻՄ ազգաբնակչությունն ինքնորոշման ուղղությամբ 1991թ. ընտրեց անկախություն և պետականություն ունենալու տարբերակը:

16. Նրորոյա ժամանակներում արցախահայությունն իր ազգային պետականությունը կերտել է երկու փուլերով:

Առաջին փուլը, ժամանակագրական առումով, ընդգրկում է 1991թ. սեպտեմբերի 2-ից՝ ԼՂՀ հռչակումից մինչև 1998թ. սեպտեմբերի 27-ը՝ ՏԻՄ առաջին ընտրությունները: Այդ շրջանը կարելի է անվանել նոր քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական հիմնարար սկզբունքների ձևավորման փուլ: Աղբրեջանի ագրեսիայի պայմաններում արցախահայությունը ոչ միայն հռչակեց իր անկախությունը, այլև ստեղծեց արևմտյան չափանիշներին համարժեք լիարյուն գործող պետական, քաղաքական, տնտեսական համակարգ: Այն իր կենսունակությունն ապացուցեց արցախյան պատերազմի և հետպատերազմյան շրջաններում:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1998թ. սեպտեմբերի 27-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 10-ը՝ ԼՂՀ սահմանադրության ընդունումը: Այդ շրջանը կարելի է անվանել երկրի ժողովրդավարացման և պետականության ամրապնդման փուլ: Զննարկվող ժամանակահատվածում դրված հիմնախնդիրներն ու դրանց լուծումները մեզ հիմք են տալիս ասելու, որ գործող քաղաքական իրավակարգն ու տնտեսական համակարգը ենթարկվել են արմատական բարեփոխման: Այդ ամենն իր սահմանադրական ամրագրումն ստացավ 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի ժամանակ:

Դժվարություններով հանդերձ, Արցախում պետական կառավարման համակարգի տարեցտարի ժողովրդավարացումը, քաղաքացիական հասարակությանը բնորոշ ինստիտուտների ձևավորումը, տեղական ինքնակառավարման եվրոպական սկզբունքների ընդունումը, նորմատիվ-իրավական բազայի մշտական կատարելագործումը, քաղաքական բարեփոխումների անշրջելիությունն ու խորացումը, շուկայական տնտեսվարման սկզբունքների և մեխանիզմների անընդհատ նորացումը, զարգացումն ու ամրապնդումը միանշանակ վկայում են, որ հայկական երկրորդ ազգային պետությունը ԼՂՀ ազգաբնակչությունը վճռականորեն է տրամադրված:

ա) պաշտպանելու արյան և զրկանքների զնով ձեռք բերված ազատությունն ու անկախությունը,

բ) կառուցելու համամարդկային արժեքներին հարիր քաղաքացիական հասարակություն,

գ) ինտեգրվելու միջազգային հանրությանը՝ դառնալու համաշխարհային համակեցության լիիրավ անդամ:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում ներկայացված են ատենախոսության մեջ օգտագործված արխիվային նյութերը, սկզբնաղբյուրները, պարբերական մամուլը, գրականությունը:

Հավելվածների մեջ քարտեզների տեսքով ներկայացված են քննարկվող ժամանակաշրջանի իրադարձություններն ու պատմական զարգացումները:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի  
հետևյալ հրատարակումներում

**ա) մենագրություններ**

1. Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002, 440 էջ: Artsakh history, From time immemorial up to our days, Yerevan, 2005, 384 p., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, լրամշակված երկրորդ հրատարակություն, Երևան, 2011, 335 էջ:
2. Լեռնային Ղարաբաղ, Երևան, 2009, 112 էջ:
3. Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականա-կերտման պատմության (1813-2006թթ.), Ստեփանակերտ, 2012, 416 էջ:

**բ) համահեղինակային աշխատություններ**

4. Հակոբյան Տ., Պատմական նստաշրջան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008, 108 էջ:

**գ) հոդվածներ**

5. The preconditions of Russian orientation of Armenians of Artsakh, Denmark Orhus University, 1996, p. 30-35.
6. Արցախի պետականության ծնունդը որպես ազգային-ազատագրական պայքարի արդյունք, «Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում», հմ.1, 1996, էջ 24-28:
7. Արցախյան հիմնահարցի պատմաիրավական հիմնավորումները, Արցախյան շարժման 10-ամյակին նվիրված «Արցախյան ազգային ազատագրական շարժումը և հայկական պետականության վերածնունդը» թեմայով գիտաժողովի նյութեր, Ստեփանակերտ, 1998, էջ 43-49:
8. Եկեղեցի-պետություն հարաբերությունները ԼՂԻՍ-ում 1920-30-ական թվականներին, «Քրիստոնեություն և իրավունք», միջազգային խորհրդաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2001, էջ 118-130:
9. Խորհրդային Ադրբեջանի զաղության քաղաքականությունը: Արցախահայության պայքարը ԼՂԻՍ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու համար /1923-1988թթ./, Հայոց պատմության հարցեր, Երևան, 2002, էջ 190-200:
10. Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը և արցախահայությունը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հմ.1-2, 2003, էջ 128-132:
11. Արցախի վարչաքաղաքական կարգը /1813-1917թթ/, «Պատմագիտական ուսումնասիրություններ», հոդվածների ժողովածու, մաս 1-ին, Ստեփանակերտ, 2003, էջ 4-11:
12. Ռազմաքաղաքական կացությունը Արցախում 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին, «ԱրՊՀ գիտական տեղեկագիրը», հմ.1, 2004, էջ 46-52:
13. Տարածքային ամբողջականության միջազգային իրավունքի սկզբունքը և Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հեռանկարները, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով», Երևան, 2006, էջ 43-58:
14. Լեռնային Ղարաբաղի հայոց պետականության կայացման ընթացքը /1917թ.-1918թ. մայիս/, «Պատմագիտական ուսումնասիրություններ», հոդվածների ժողովածու, մաս 2-րդ, Ստեփանակերտ, 2006, էջ 4-10:
15. Историография Арцаха /HKP/, “Историографический диалог вокруг непризнанных государств, Приднестровье, Нагорный Карабах, Армения, Южная Осетия и Грузия”, Nokkxhido Universiti, March 2007, Sapporo, p. 37-52.
16. Հայագիտությունը Շուշիում 19-րդ դարում և նրա զարգացման միտումները, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութերը, Երևան, 2007, էջ 86-92:

17. Нагорный Карабах: Истоки российской ориентации, в сборнике „От самоопределения к международному признанию: Абхазия, Нагорный Карабах, Приднестровье, Южная Осетия“, Тирасполь, 2008, с. 204-211.
18. Արցախի խորհրդային և ազատագրական պայքարի տարիների պատմության արտացոլումը պատմագրության մեջ, «ԱրՊՀ Գիտական տեղեկագիր», հմ. 2, 2008, էջ 61-66:
19. Անկախության նվիրյալները. ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին. Առաջաբանի փոխարեն, Անկախության նվիրյալները: ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Երևան, 2009, էջ 3-15:
20. Արցախ-Ռուսաստան քաղաքական հարաբերությունները 1720-24թթ., «Միջազգային գիտաժողովի նյութեր», նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ 1-ին, Ստեփանակերտ, 2009, էջ 229-232:
21. Լեռնային Ղարաբաղում հայկական պետականության կազմավորման գործընթացը /1917-դեկտեմբեր-1918 հուլիս/, Մ.Մաշտոց համալսարան, «Լրատու», Գիտական հոդվածների ժողովածու, հմ. 2, 2010, էջ 17-25:
22. 20-րդ դարի առաջին քառորդում Բաքվում, Գանձակում և Լեռնային Ղարաբաղում հայերի էթնիկ գտումների պատճառներն ու հետևանքները, «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների պատճառներն ու հետևանքները» 2010թ. մարտի 21-22-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, 2010, էջ 19-31:
23. Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը որպես արցախահայ պետականության գաղափարախոս ու կազմակերպիչ, «Հայագիտական հանդես», հոդվածների ժողովածու, պրակ.1, Ստեփանակերտ, 2010, էջ 29-40:
24. Нагно-Карабахская республика, “Арагац”/Парус/, Москва, 2011, с. 3-10.
25. Արցախյան հիմնահարցը խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության համատեքստում /1917-1920թ.ապրիլ/, «ԱրՊՀ գիտական ընթերցումներ», հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2011, էջ 3-11:
26. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և արցախահայ պետականության վերակերտման գործընթացը (1720-1730թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, 2011, էջ 262-273:
27. Գ.Նժդեհի դերը արցախահայության ազգային ազատագրական պայքարի կազմակերպման գործում (1920-21թթ.), «Գորիսի պետական համալսարանի միջազգային երկրորդ գիտաժողովի աշխատանքների ժողովածու», Գորիս, 2011, էջ 295-302:
28. Սոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում, Հայագիտական հանդես, հոդվածների ժողովածու, պրակ. 2, 2011, էջ 94-104:
29. Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման պատմական հիմքը, «Նոր մտտեցումներ ԼՂՀ հիմնահարցին», գիտաժողովի նյութեր, 8 սեպտեմբերի, 2011թ. Երևանի Վ.Բյուրսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Երևան, 2012, էջ 59-68:
30. Ցարական Ռուսաստանի՝ մելիքական կարգի վերացման քաղաքականությունը, դրա նպատակներն ու հետևանքները, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», թիվ 1, 2012, էջ 48-57:
31. Արցախի նոր և նորագույն շրջանի պատմության արտացոլումը ադրբեջանական պատմագրության մեջ և հայ պատմագիտական մտքի արցախյան դպրոցի հակադարձումներն ու հետագա անելիքները, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը միջազգային գիտաժողովի նյութեր», 2012թ. հունիսի 24-հուլիսի 1, Երևան, 2012, էջ 13-16:



32. Պետականության վերականգնման փորձերը Արցախում ժՈ դարի երկրորդ կեսին, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր LԲ, Պեյրուք, 2012, էջ 489-497:
33. Արցախի հիմնահարցը պանթուրքական գաղափարախոսության հոլովություն, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», թիվ 2, 2012, էջ 80-90:
34. Ազգային ազատագրական շարժման գաղափարաբանության ծնունդը եւ առաջին քայլը Արցախում 17-րդ դարի վերջերին եւ 18-րդ դարի սկզբներին, «Հայագիտական հանդես», հոդվածների ժողովածու, պրակ 3, Ստեփանակերտ, 2012, էջ 16-31:

Балаян Ваграм Размикович  
Исторические и идеологические проявления борьбы за освобождение и  
государственность в Арцахе  
(вторая половина 17-го века – 2007 год)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по  
специальности 07.00.01 – История Армении

Защита состоится 5-ого апреля 2013 г. в 14.00 на заседании специализированного  
совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной  
Академии Наук РА (Адрес: 0019. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

## РЕЗЮМЕ

Обобщенное и целостное представление закономерного хода свободительной борьбы армян Арцаха со второй половины 17-го века до 2007 года, тенденции ее развития и процесс воссоздания национальной государственности основанное на многочисленных источниках, имеет большое научное значение. Ошибки, допущенные в прошлом и нелогичные расчеты в процессе создания государства, которые во многих случаях, становились препятствием на пути решения национальных проблем, на современном этапе становятся уроком, служат источником усвоения богатого опыта для государственных и политических деятелей. Исследование темы в условиях антиармянской политики Азербайджана и Турции и фальсификации реальной истории края приобретает особую актуальность.

Мелики Арцаха и католикосы Гандзасара, стремясь восстановить свои права и свободы, в конце 17-го и начале 18-го века выработали стратегию освобождения армянского народа, которая предполагала, восстановление армянского царства собственными силами при поддержке России.

Идея не только защиты армянской идентичности, но и завоевания свободы и воссоздания государственности с помощью вооруженной борьбы явилась отправной точкой новой системы ценностей.

Обеспечение военнополитической безопасности Арцаха, необходимость восстановления самовластия сформировало в среде духовных и светских владык края сознание того, что существование и развитие армянства, возможно, в случае объединения и совместных действий.

В Арцахе, с каждым днем преобладающей идеей становилось стремление к политической самостоятельности всей Армении, через восстановление Армянского царства. Именно вокруг этой стержневой идеи разворачивались важнейшие исторические события армянской действительности в 18-ом и начале 19-го века. Победа русского оружия, одержанная при активном участии армянского народа, была закреплена Гюлистанским мирным договором 12 октября 1813г., которая стала непреходящей исторической реальностью для нашего народа. Он лишний раз свидетельствует о том, что Карабах вошел в состав России в статусе отдельной национально-государственной единицы. С этого времени край переживал экономический и культурный подъем, хотя и были ощутимы потери в сфере политики.

В ходе более чем векового поиска (с подписания Гюлистанского мирного договора до октябрьского государственного переворота 1917г.), армяне Арцаха осознали, что для царского самодержавия чуждо любое стремление к национальной государственности, включая автономию. Армянский народ, переосмыслив исторический опыт и трезво оценив реалии анализируемого периода, понял что только независимое национальное государство может стать единственным гарантом его полноправной, полнокровной, творческой жизни.

В результате борьбы и работы армянских политических деятелей, в декабре 1917г. в Арцахе были заложены основы новой государственности. Фактически, задолго до появления на исторической арене Азербайджана и азербайджанцев, как этнополитической общности, армянство Арцаха воссоздало свою государственность, став региональным фактором.

До утверждения советских порядков( май 1920), армянство Нагорного Карабаха пережило определенный этап государственного строительства. Конечно на этом пути были безусловно и определенные трудности. Вскоре после установления в Азербайджане новых порядков в апреле 1920 г, под завесой советизации Нагорный Карабах был насильно передан Азербайджану.

В Советские годы, в Арцахе все же удалось сохранить статус внутренней автономии, которая в условиях большевистского тоталитаризма и “интернационализма” стала основным гарантом сохранения армянской идентичности.

В составе СССР Нагорный Карабах была автономной областью, которая имела опосредованную зависимость от союзных властей, то есть подчинялась административному управлению центра через другую административно-территориальную единицу СССР.

Несмотря на то, что в течении 70 лет Советский Азербайджан посредством травли и силы, пытался ограничивать права армянской автономии, армянство края сплотившись вокруг патриотически настроенного руководства и интеллигенции смогло противостоять антиармянской политике бакинских властей. Более того, за весь советский период в условиях существования армянской автономии, здесь сохранился армянский дух. В эти годы армянство края, не потеряв историческую память, прямо и косвенно передавало новому поколению идею воссоединения с матерью – Арменией и государственности.

Распад советской империи создало благоприятные условия для реализации вековых чаяний армянства Арцаха. В горниле освободительной борьбы, армяне Арцаха с помощью всего армянства не только приобрели независимость, но и воссоздали свою национальную государственность.

**Historical and Ideological Manifestation of the Struggle for Liberation and Statehood in Artsakh (from the second half of the 17<sup>th</sup> century to 2007)**

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on April 5, 2013, 14<sup>00</sup>, at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/ 4)

**SUMMARY**

Concise and holistic presentation of the natural course of the liberation struggle of the Armenians of Artsakh in the period from the second half of the 17<sup>th</sup> century to 2007, the tendencies of its development and the process of rebuilding national statehood on that background (based on numerous sources) has scientific importance. Formerly in the majority of cases illogical estimates and mistakes made in the process of statehood building posed obstacles to the solution of national issues; nowadays they serve as a lesson and a source for gaining rich experience for statesmen and political figures. The anti-Armenian policy of Azerbaijan and Turkey and the distortion of historical facts enhance the actuality of the study of the topic.

The meliks of Artsakh and the catholicos of Gandzasar who were assiduous in the re-establishment of rights and freedoms at the end of 17<sup>th</sup> and at the beginning of the 18<sup>th</sup> centuries developed a strategy for the liberation of the Armenian people which implied restoration of the Armenian kingdom relying on their own potential and the Russian support.

The discovery of the idea of not only saving the Armenian identity, but also gaining liberty and rebuilding of statehood through armed struggle became a landmark in the creation of a new system of values.

The safeguarding of the political and military security of Artsakh, the necessity of re-gaining self-government developed the idea of the impossibility of separated existence and development in the consciousness of the spiritual and secular leaders of the region in case if they don't unite and act integrally. The strive for the political identification of whole Armenia, the restoration of the Armenian kingdom was becoming more dominant in the Artsakh reality every day. The main historical events of the Armenian reality of the 18<sup>th</sup> century and the beginning of the 19<sup>th</sup> century developed around this pivotal idea.

The victories of the Russian army, gained with the assiduous participation of the Armenian people, were accomplished by the treaty of Gulistan on October 12, 1813.

The treaty of Gulistan is an enduring historical reality for our people. It testifies that Karabakh passed under the domination of Russia in the status of a separate national and governmental unit.

On the one hand the region experienced cultural and economic revival, on the other hand there were losses in its political arena.

From the conclusion of the treaty of Gulistan in 1813 until October state revolution of 1917 – after more than one century of lasting search- the Arstakh Armenians realized that any aspiration for national statehood, or even self-governance is alien to the czar autocracy. Rethinking over the historical experience and soberly evaluating the events of the analyzed period the Armenian people fully comprehended that merely an independent national state may become the only guarantor of its competent, full-blooded and creative life.

In December 1917 foundations of new statehood were laid as a result of continuous work and struggle. In fact, the Artsakh Armenians had restored statehood and became a regional factor prior to stepping into the political arena of Azerbaijan and the Azeris as an ethno-political entity. Until the establishment of the Soviet power in May, 1920 the Armenians of Nagorno Karabakh lived a difficult, but self-governed life. In April, 1920 after the establishment of the new political order Nagorno Karabakh was forcefully annexed to Azerbaijan ; all that was done under the veil of Sovietization.

As a result of the liberation struggle in the Soviet period, Artsakh managed to preserve inner autonomous status which became the main guarantor for preserving Armenian identity under the conditions of Bolshevik totalitarianism and “internationalization”.

Being indirectly dependent on the Soviet power the NKAO was an autonomous region of the USSR which meant it was under the administrative control of the USSR through another administrative-territorial unit.

For seventy years Soviet Azerbaijan endeavored to limit the rights of the Armenian autonomy by hounding and force. However the Armenians of the region united around the patriotic-minded local government and intellectuals and resisted the anti-Armenian policy of Baku authorities. Furthermore, during the existence of the Armenian autonomy in the entire Soviet period the Armenians managed to preserve the Armenian spirit. During these years, the Armenians of the region preserved historical memory. Directly and indirectly they transmitted the idea of the reunification and statehood to the new generation.

The collapse of the Soviet empire created favorable conditions for the fulfillment of the national dreams of the Armenians of Artsakh. In the vortex of liberation struggle the Armenians of Artsakh not only gained independence, but also restored their national statehood with the support of the whole Armenian community.